ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2014

Բովանդակություն

1.Հանրային հեռուստառադիոընկերության համակարգը 3

2. Հանրային հեռուստառադիոընկերության 2013 թվականի գործունեության նպատակներն ու խնդիրները 4

3. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ 10

4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ 12

5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ 30

6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ 42

7. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ 49

8. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ 57

1. Հանրային հեռուստառադիոընկերության համակարգը

Հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով և որը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում 2001 թվականի հունիսի 7-ին:

Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

Հեռուստատեսային հաղորդումների արտադրության և համահայաստանյան հեռարձակման ոլորտում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հանրային Հեռուստաընկերություն), որը ստեղծվել է համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 4-ի N 592-Ն որոշման: Հանրային հեռուստաընկերությունն իր գործունեությունը սկսել է Ազգային հեռուստատեսությունից փոխանցված շենք-շինությունների ու տեխնիկական միջոցների հիման վրա:

Ռադիոհաղորդումների արտադրության և համահայաստանյան հեռարձակման ոլորտում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հանրային ռադիոընկերություն), որը ստեղծվել է համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 661-Ն որոշման: Հանրային ռադիոընկերությունն իր գործունեությունը սկսել է Ազգային ռադիոյից փոխանցված շենք-շինությունների և տեխնիկական միջոցների հիման վրա:

Հանրության բոլոր շերտերի հոգևոր և մշակութային պահանջմունքները բավարարող հաղորդումների արտադրության և հեռարձակման ոլորտում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հոգեվոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն), որը ստեղծվել է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 216-Ն որոշման:

ՀՀ Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման ոլորտում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Շիրակի հանրային հեռուստառադիո), որը ստեղծվել է համաձայն ՀՀ կառավարության դեկտեմբերի 29-ի N 1312 որոշման:

Հանրային հեռուստառադիոընկերության կողմից հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հասարակության տարբեր շերտերի և ոլորտների ներկայացուցիչների կարծիքի ուսումնասիրության ոլորտում Խորհրդի ծրագրային քաղաքականությունն իրականացնող մարմինը «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն), որը ստեղծվել է համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի N 1401-Ն որոշման:

Նշված բաժնետիրական ընկերությունների պետական սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են Խորհրդին:

Հանրային հեռուստառադիոընկերությունը Եվրոպական հեռարձակողների միության (EBU) լիիրավ անդամ է: Անդամակցությունը հնարավորություն է ընձեռում Հանրային հեռուստառադիոընկերությանը Հայաստանը ներկայացնել Եվրոպական հեռարձակողների միության կողմից կազմակերպվող մի շարք միջազգային միջոցառումների շրջանակներում (օրնակ՝ Եվրատեսիլ, Մանկական եվրատեսիլ և այլն), ինչպես նաև հեռուստադիոտողներին հասանելի դարձնել միջազգային խոշոր սպորտային և այլ միջոցառումները:

2. Հանրային հեռուստառադիոընկերության 2013 թվականի գործունեության նպատակներն ու խնդիրները

2013 թվականին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության գործունեության հիմնական նպատակն է եղել հանրային կյանքում իր առանձնահատուկ առաքելության վերահաստատումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտականությունների և լիազորությունների շրջանակներում: Ըստ այդմ, դրվել են հետևյալ նպատակները.

- ապահովել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անաչառ, հավաստի, օպերատիվ, համակողմանի, ամբողջական և սպառիչ լուսաբանումը,
- բավարարել հանրության սեռային, տարիքային, սոցիալական, էթնիկական բոլոր խմբերի բարոյական և գեղագիտական պահանջմունքները՝ առաջնորդվելով համամարդկային և ազգային բարձր արժեքների պահպանման և հանրահռչակման սկզբունքով,
- նպաստել հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության, գթասրտության և հանդուրժողականության գաղափարների տարածմանը,

- խթանել հայ ժողովրդի պատմական հիշողության, լեզվի, գրականության, ազգային ինքնության, մշակութային ժառանգության պահպանմանն ու հարատևմանը միտված հանրային ձեռնարկումները՝ ապահովելով դրանց լուսաբանման շարունակական և հարաճուն ընթացքը,
- սահմանել ու կիրառել օտարալեզու ֆիլմերի և հաղորդումների թարգմանության և կրկնօրինակման աշխատանքների նոր չափանիշներ ու եղանակներ՝ առաջնորդվելով ՀՀ օրենսդրության՝ լեզվին վերաբերող պահանջներով,
- մշտապես ուշադրության կենտրոնում պահել հանրության համար կարևոր որոշումների քննարկման և ընդունման ընթացքը,
- արմատավորել առողջ ապրելակերպի սկզբունքներն ու բարձրացնել առողջապահական խնդիրներին հանրության իրազեկվածության մակարդակը,
- աջակցել մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը միտված հանրային ձեռնարկումներին՝ երեխաների մեջ ձևավորելով օրինակելի, բարոյական և գեղագիտական արժեքների ընկալման մշակույթ,
- ձևավորել Հայկական աշխարհի միասնական տեղեկատվական դաշտ՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացմանը, հայ ներուժի համախմբմանը և արտերկրի հայ գաղթօջախներում հայապահպանությանը,
- ընդլայնել հանրային ալիքների հեռարձակման տարածքը՝ հասանելի լինելով Հայաստանի և Արցախի բոլոր անկյուններում, ինչպես նաև եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում՝ միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները,
- կերտել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի պատկերաձայնային միասնական ոճ՝ դյուրին դարձնելով այդ կառույցների գործունեության ճանաչելիությունը,
- ապահովել հեռարձակվող հաղորդումների տեխնիկական անհրաժեշտ որակն ու համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
- ընդլայնել համագործակցությունը Եվրոպական հեռարձակողների միության հետ և համոգործակցության դաշտն արտասահմանյան այլ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ,
- ապահովել մասնագիտական կադրերի բնականոն և սահուն սերնդափոխությունը և բարելավել աշխատողների սոցիալական վիճակը,
- մշակել հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող սոցիալական գովազդի ընտրության և ներկայացման նոր սկզբունքներ՝ առաջնային համարելով հանրության պահանջմունքները,

- հնարավորինս նվազեցնել հանրային հեռուստատեսության ու ռադիոյի վարկանիշային մրցակցությամբ պարտադրվող առևտրային հաղորդումները՝ ապահովելով հանրային հաղորդումների հեռարձակման առավել անկաշկանդ ընթացք,
- խթանել այլընտրանքային մեդիա բովանդակության ստեղծման և տարածման աշխատանքները՝ առավելագույնս ապահովելով վերջին 50 տարիների հայաստանյան կարևոր իրադարձություններին վերաբերող արխիվային նյութերի հասանելիությունը: Հասարակության լայն հատվածներին հասանելի դարձնել մշակութային և հասարակական արժեք ունեցող հայ ֆիլմարտադրողների և լրագրողների կողմից ստեղծված Հայաստանի սոցիալական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող հեռուստահաղորդումները, փաստավավերագրական և գեղարվեստական ֆիլմերը, որոնք կրթական նպատակներով կօգտագործվեն նաև ավագ դպրոցներում և համալսարաններում:

Նշված նպատակների իրագործման համար Հանրային հեռուստառադիոընկերությունը 2013 թվականին իր գործունեության հիմքում դրել է հետևյալ հիմնական խնդիրները.

- պատրաստել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հրատապ խնդիրներին նվիրված այնպիսի հաղորդումներ, որոնք ապահովում են անմիջական կապը լսարանի հետ, արձագանքում են ոչ միայն հանրության կյանքում առկա հայտնի խնդիրներին, այլև հանպատրաստից բարձրացնում են նոր հարցեր և փնտրում ոչ ստանդարտ լուծումներ,
- հիմնովին վերազինել«Առաջին լրատվական» ծառայության ստուդիայի տեխնիկական համակարգը, հիմնանորոգել հեռուստաֆիլմերի «Երևան» ստուդիայի շենքի մասնաշենքն ու տրամադրել«Առաջին լրատվականին»,
- մշակել և կիրառել հանրային կարծիքի ուսումնասիրման նորագույն մեթոդներ՝ ավելի արդյունավետ և նպատակային դարձնելով հաղորդումների հասցեականությունն ու ծրագրման աշխատանքները: Պահպանել անհրաժեշտ համամասնություն սոցիալական խմբերի խնդիրների լուսաբանման ոլորտում,
- պատրաստել հասարակության խոցելի և անպաշտպան խմբերի՝ ծերերի, ծնողազուրկ երեխաների, հսկողությունից դուրս մնացած դեռահասների, գործազուրկների, ներառական կրթության մեջ ներգրավված սովորողների, հաշմանդամների խնդիրներին վերաբերող այնպիսի հաղորդումներ, որոնք հանրության մեջ նրանց նկատմամբ ձևավորում են համարժեք և հանդուրժողական վերաբերմունք,

- բոլոր հաղորդումներում սահմանել կենդանի, բայց կանոնական հայերենի գերակայություն՝ որպես եթերային լեզվական քաղաքականության առանցքային պայման: Իրականացնել ազգային երգի ու երաժշտության հանրահռչակումը՝ շարունակելով համապատասխան հաղորդաշարերի և համերգների հեռարձակումն ու պատրաստելով նորերը: Ներկայացնել հայ ժողովրդի պատմության ուսանելի և հաղթական դրվագները, բացահայտել պատմության առեղծվածները: Ներկայացնել հայ գրականության լավագույն նմուշները կենդանի և դինամիկ եղանակով՝ երիտասարդական լսարանի առավելագույն ներգրավումն ապահովելու համար:
- համալրել հանրային հեռուստաընկերությունների ձայնային բազան, կազմակերպել ֆիլմերի կրկնօրինակման և հնչունավորման աշխատանքներ:
- շարունակել հեռարձակել ՀՀ Ազգային ժողովի, Կառավարության, Պաշտպանության նախարարության, Ոստիկանության գերատեսչական հաղորդումները: Զանազան հաղորդումներում պատշաճ առիթներով մեծարել զոհված և կենդանի հերոսներին: Նկարահանել ֆիլմեր հայրենական ոստիկանների, փրկարարների և շտապ օգնության գործունության մասին,
- բարելավել առողջապահական հաղորդաշարի որակը և ապահովել նրա հանրամատչելիությունը,
- պատրաստել մանկապատանեկան ճանաչողական, ժամանցային և երաժշտական նոր հաղորդումներ: Ցուցադրել բարություն և ընկերասիրություն սերմանող մուլտֆիլմեր, երեխաների մեջ արմատավորել սեփական իրավունքների պաշտպանության և հանրային պատասխանատվության զգացումներ, ճանաչելի և սիրելի դարձնել հայրենի բնաշխարհն ու նրա մարդկանց,
- ապահովել ռադիոհաճախականություններով, ինչպես նաև ինտերնետային կապով Հանրային ռադիոընկերության հայերեն և օտար լեզուներով շուրջօրյա հաղորդումների հեռարձակումն արտասահմանում: Ապահովել հանրապետության բոլոր բնակավայրերում և Արցախում Հանրային հեռուստաընկերության հաղորդումների արբանյակային կապով հեռարձակումը: Բարձրացնել հաղորդումների հեռարձակման որակը,
- զարգացնել և ընդլայնել Եվրոպական հեռարձակողների միության, մի շարք եվրոպական, ԱՊՀ և այլ երկրների հեռուստառադիոընկերությունների հետ համագործակցությունը: Ավարտին հասցնել ամբողջական թվանշանային հեռարձակման տեխնիկական աշխատանքները: Պատրաստել Հանրային հեռուստաընկերության նոր համացանցային կայք՝ այնտեղ տեղադրելով եռալեզու համապատասխան բովանդակություն՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն,

- օգտագործել համակարգչային նորագույն տեխնոլոգիաներ հեռուստատեսային և ռադիո տարբերանշանների, ձայնային ազդանշերի միասնականացումը և տեխնիկական կիրառելիությունն ապահովելու համար,
- շարունակել Հանրային հեռուստաընկերության տեխնիկական փուլային վերազինման աշխատանքները,
- ակտիվորեն մասնակցել առաջիկա Եվրատեսիլ մրցույթին՝ ապահովելով նախապատրաստական անհրաժեշտ միջոցառումներ,
- մշակել համատեղ կրթական ծրագիր Խորհրդի և Երևանի պետական համալսարանի մասնակցությամբ: Ծրագրի իրականացման համար ստեղծել «Մասս մեդիա» գիտակրթական կենտրոն, որի նպատակն է պատրաստել նեղ մասնագիտացված, արհեստավարժ հեռուստատեսային աշխատողներ,
- համագործակցել սոցիալական գովազդ արտադրող և պատվիրող կառույցների հետ՝ ապահովելու դրանց համապատասխանությունը եթերային պահանջներին,

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «ՀՀ 2013թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և առևտրային գործունեությունից ստացված եկամուտները:

Հանրային հեռուստառադիոընկերության միջոցով իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- 01.01.03.02. Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ - 32,574.00 հազար դրամ գումարի չափով,
- 08.03.01.01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում - 114,812.75 հազար դրամ գումարի չափով,
- 08.03.01.02 Հեռուստատեսային ծառայություններ - 2,342,897.30 հազար դրամ գումարի չափով,
- 08.03.01.03 Ռադիո ծառայություններ - 648,935.90 հազար դրամ գումարի չափով,
- 08.03.01.04 Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ - 25,642.00 հազար դրամ գումարի չափով,
- 08.03.01.06 Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ - 8,176.70 հազար դրամ գումարի չափով,
- 08.03.01.10 Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ - 147,900.30 հազար դրամ գումարի չափով,
- 10.09.02.03 Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում - 4,224.00 հազար դրամ գումարի չափով,

- 11.01.01.01 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ - 856,441.45 հազար դրամ գումարի չափով:

Նշված ծրագրերով նախատեսված աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» պետական հիմնարկի և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով:

Նշված ծրագրերի շրջանակներում փաստացի կատարված աշխատանքների ծավալները և պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

2013 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության կողմից իրականացված ծրագրերի պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները

(հազ. դրամ)

Ծրագրի անվանումը	Հաստատված բյուջե	Փոփոխություններ բյուջեում (+,-)	Բյուջեն փոփոխություններից հետո	Դրամարկղային ծախսեր	Շեղում
Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ	32,574.00	-	32,574.00	30,495.34	2,078.66
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	121,254.20	- 6,441.45	114,812.75	114,421.33	391.42
Հեռուստատեսային ծառայություններ	2,333,173.30	9,724.00	2,342,897.30	2,342,897.30	0.00
Ռադիո ծառայություններ	637,210.50	11,725.40	648,935.90	648,935.90	0.00
Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ	24,761.70	880.30	25,642.00	25,642.00	0.00
Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ	8,049.00	127.70	8,176.70	8,176.70	0.00
Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ	147,849.10	51.20	147,900.30	147,900.30	0.00
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	4,224.00	-	4,224.00	1,867.08	2,356.92
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	856,441.45	856,441.45	856,299.90	141.55
Ընդամենը	**3,309,095.80**	**872,508.60**	**4,181,604.40**	**4,176,635.85**	**4,968.55**

3. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինն է, որը սահմանում է Հանրային հեռուստառադիոընկերության հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալներն ու հեռուստառադիոծրագրերի (ալիքների) թիվը, Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգն ու ուղղությունները, հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության աշխատողների կարգավիճակը և պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմաններն ու վարձատրման կարգը, համակարգում է իր ենթակայության ընկերությունների ընթացիկ գործունեությունը, մշակում է ոլորտի ծրագրային քաղաքականությունը, լսում է Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և ոլորտի մյուս ընկերությունների գործադիր տնօրենների հաշվետվությունները:

2013 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և նրա աշխատակազմի պահպանումն իրականացվել է «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.01 «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով նախատեսված միջոցներով: Այդ ծրագրով նախատեսվել էր հատկացնել 121,254.20 հազ. դրամ: Սակայն 2013թ. հունվարին կատարվել է հոդվածային վերաբաշխում և տնտեսագիտական դասակարգման 4214 «Կապի ծառայություններ», 4222 «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» և 4237 «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածներից 2,380.00 հազ.դրամ տեղափոխվել է 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդված: Բացի այդ, համաձայն 19.12.2013թ-ի ՀՀ Կառավարության N 1424-Ն որոշման, կատարվել է միջծրագրային վերաբաշխում և բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08.03.01.01 «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրից 6,441.4 հազ.դրամ տեղափոխվել է 11.01.01.01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագիր և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը հատկացվել է 6,441.4 հազ. դրամ համակարգչային տեխնիկայի համալրման և արդիականացման, ինչպես նաև գրասենյակային և այլ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերման նպատակով (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական սարքավորումներ» հոդվածով):

Արդյունքում 2013թ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով

ընդամենը հատկացվել է 114,812.75 հազ.դրամ, որից ծախսվել է 114,421.33 հազ.դրամ (ծախսերն ըստ առանձին հոդվածների ներկայացվել են աղյուսակ 3-ում): 2013 թվականի գործունեության արդյունքում Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ունեցել է 391.42 հազ. դրամ գումարի տնտեսում:

Աղյուսակ 2

2013 թվականին «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները

(հազ. դրամ)

Ծախսային հոդվածի անվանումը	Հաստատված բյուջե	Փոփոխություններ բյուջեում (+,-)	Բյուջեն փոփոխություններից հետո	Դրամարկղային ծախսեր	Շեղում (+,-)
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	108,167.70	- 2,449.90	105,717.80	105,716.59	1.21
Կապի ծառայություններ	2,948.20	- 1,249.20	1,699.00	1580.29	118.71
Ապահովագրական ծախսեր	120.00	- 26.00	94.00	94.00	-
Գույքի և սարքավորումների վարձակալություն	3,588.00		3,588.00	3,588.00	-
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	2,133.20	- 2,133.20	-	-	-
Ներկայացուցչական ծախսեր	280.00	- 280.00	-	-	-
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	800.00		800.00	528.50	271.50
Գրասենյակային նյութեր և հագուստ	417.10	- 216.70	200.40	200.40	-
Տրանսպորտային նյութեր	2,764.00	- 84.70	2,679.30	2,679.30	-
Պարտադիր վճարներ	36.00	- 1.75	34.25	34.25	-
Ընդամենը	**121,254.20**	**- 6,441.45**	**114,812.75**	**114,421.33**	**391.42**

Ինչպես և նախորդ տարիներին, 2013 թվականին նույնպես Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն իր աշխատակազմի միջոցով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով իրեն ամրագրված լիազորությունների շրջանակներում շարունակել է համակարգել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և ոլորտի մյուս ընկերությունների գործունեությունը:

2013 թվականին Խորհրդի կողմից հաստատվել են ընկերությունների հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալները և հեռուստածրագրերի և ռադիոծրագրերի (ալիքների) թիվը, ընկերությունների 2013 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի ու դրամական

հոսքերի նախահաշիվները, հաղորդումների թեմատիկ ուղղություններն ու ծավալները: Վերանայվել է Հանրային հեռուստառադիոընկերության ծրագրային քաղաքականությունը: Մեծացվել է սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային ուղղվածություն ունեցող հաղորդումների քանակը, ճշգրտվել են հանրությանը հղվող բարոյագեղագիտական ուղերձների բովանդակությունը, մշակվել է ֆիլմերի ցուցադրման նոր քաղաքականություն՝ շեշտը դնելով այնպիսի ֆիլմերի վրա, որոնցում բռնության և դաժանության տեսարանները հասցված են հնարավոր նվազագույնի: Շարունակվել է հայրենական արտադրության գեղարվեստական և փաստավավերագրական բարձրակարգ ֆիլմեր, այդ թվում՝ հայ դասական գրականության նմուշների էկրանավորումների հեռարձակումը: Կինոարտադրության ոլորտում առաջնային տեղ է հատկացվել փոքր ծավալի սերիալներին՝ ներկայացնելով հանրությանը հուզող խնդիրներն ու երևույթները:

Աշխատանքներ են տարվել ոլորտի միջազգային կառույցների և արտասահմանյան հեռուստաընկերությունների հետ կապերի և փոխհարաբերությունների ընդլայնման ուղղությամբ:

Մշակվել է Հանրային հեռուստառադիոընկերության 2014-2016 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը և ոլորտի քաղաքականությունը:

4. «Հայաստանի հանրային հեռուստարնկերություն» ՓԲԸ

2013 թվականին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ «Առաջին» և արբանյակային (արբանյակային հեռարձակմամբ) ալիքներով:

2013 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում և սահմանված պահանջներին համապատասխան պատրաստել և հեռարձակել է թեմատիկ տարբեր ուղղություններով հաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարել հանրության տարբեր շերտերի և սոցիալական խմբերի հեռուստատեսային պահանջմունքները և ապահովել տեղեկացված լինելու նրանց սահմանադրական իրավունքը:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեից Հանրային հեռուստաընկերությանը՝ ընթացիկ գործունեությունն ապահովելու նպատակով, հատկացվել է 2,342,897.3 հազ. դրամ գումար ընթացիկ դրամաշնորհ:

Հեռուստահաղորդումների պատրաստում

2013 թվականին Հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, ինչպես նաև իր կանոնադրությամբ: 2013 թվականի ընթացքում «Առաջին» ալիքի եթերով հեռարձակվել են 8,733.9 ժամ, իսկ արբանյակային ալիքի եթերով՝ 8,733.7 ժամ ընդհանուր ծավալներով հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված Աղյուսակ 3-ում նշված թեմատիկ ուղղությունների:

Աղյուսակ 3

2013 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալներն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	«Առաջին» ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)	Արբանյակային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	608.1	598.1
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1,545.8	1,658.6
3	Մշակութային (այդ թվում՝ ֆիլմեր)	3,293.8	3,128.4
4	Կրթական, մանկապատանեկան	576.7	531.4
5	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	426.9	696.7
6	Մարզական	308.0	251.5
7	Երաժշտական	885.9	1,437
8	Զվարճալի-ժամանցային	156.8	122,3
9	Այլ հաղորդումներ	931.9	309,7
Ընդամենը		**8,733.9**	**8,733.7**

Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալներն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են նաև Գծապատկեր 1-ում և Գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 1. 2013 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից «Առաջին» ալիքով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները (%)



Գծապատկեր 2. 2013 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից արբանյակային ալիքով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները (%)



Լրատվական, լրատվական-վերլուծական

Հանրային հեռուստաընկերությունը հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անաչառ, հավաստի, օպերատիվ, համակողմանի, ամբողջական և սպառիչ լուսաբանման գործառույթն իրականացնում է «Առաջին լրատվական» լրատվական ծառայության միջոցով: Ծառայության գործունեության հիմքում տեղեկատվություն ստանալու ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքի բավարարումն է և անհատի, հասարակության և պետության շահերի համադրման ճանապարհով հանրության մեջ փոխադարձ պատասխանատվության և հանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը՝ ազատության և ժողովրդավարական արժեքների պահպանմամբ և զարգացմամբ: Ծառայությունը տեխնիկական վերազինման շարունակական գործընթացի մեջ է: 2013 թվականի ընթացքում սկսվել և ներկայումս ավարտված են ծառայության նոր մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները:

«Առաջին լրատվական»

«Առաջին լրատվական» ծառայության նույնանուն հեռուստահաղորդումն Առաջին ալիքի գլխավոր ամենօրյա լրատվական ծրագիրն է, որը համակողմանիորեն լուսաբանում է օրվա ընթացքում Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող ուշագրավ իրադարձությունները: Բացի «Առաջին լրատվական»-ի երևանյան կենտրոնակայանից, թղթակցային կետեր են գործում ՀՀ մարզերի մեծ մասում, թղթակցություններ են ստացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից, Ջավախքից, Ռուսաստանից, Եվրոպական երկրներից, Միացյալ Նահանգներից:

«Տեսանկյուն»

Գևորգ Ալթունյանի հեղինակային ամենօրյա վերլուծական ծրագիրն օրվա մեկ հրատապ թեման մեկնաբանում է անսպասելի դիտակետից՝ հրապարակախոսական սուր շեշտադրումները համադրելով թեթև և սրամիտ ոճին:

«Առաջին լրատվական-կիրակի»

«Առաջին լրատվական»-ի լրատվական-վերլուծական կիրակնօրյա թողարկումն է, որը լուսաբանում և վերլուծում է շաբաթվա ընթացքում Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող ուշագրավ իրադարձությունները:

«Առաջին սփյուռք»

Այս ամենօրյա լրատվական ծրագիրն ուղղված է հայկական սփյուռքին և ներկայացնում է ոչ միայն Հայաստանի, այլև հայ գաղթօջախների կյանքն ու մարդկանց գործունեությունը՝ ապահովելով համահայկական միասնական տեղեկատվական դաշտ:

«Հարցազրույց»

Նվեր Մնացականյանի ամենօրյա հաղորդումը, որին հյուրընկալվում է օրվա կարևոր իրադարձության հետ անմիջականորեն կապված որևէ հյուր, ում հետ անկեղծ զրույցի միջոցով հեղինակը փորձում է պարզել քննարկվող երևույթի անտեսանելի կողմերը:

Թեմատիկ ընդգրկումը լայն է՝ քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ, սպորտ և այլն:

<u>Քաղաքական, տնտեսական, հասարակական</u>

«Ազատ գոտի»

Այս թոք-շոուի նպատակը զանազան հրատապ սոցիալական և մշակութային խնդիրների վերաբերյալ առկա հանրային կարծիքի բացահայտումն ու քննարկումն է: Հաղորդումը կառուցված է թոք-շոուի դասական կանոններով՝ բանավիճող կողմեր, լսարան, մոդերատոր: Հաղորդման ընթացքում ցուցադրվում են նաև թեմային վերաբերող տեսանյութեր: Բուռն բանավեճերի արդյունքում հաղորդման տաղավարը վերածվում է «ազատ գոտու»՝ սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու ասպարեզի:

«Մարդը և մարդիկ» հաղորդաշար

Ցվետանա Պասկալևայի հեղինակային հաղորդումն անդրադառնում է հասարակության տարբեր անպաշտպան խմբերին հուզող խնդիրներին՝ սոցիալական նպաստ, թոշակ, երիտասարդության աշխատատեղերի հարցեր, մանկապարտեզների խնդիր և այն:

«Մերոնք»

2013 թվականին պատրաստվել և հեռարձակվել է «Մերոնք» հաղորդաշարը, որը պատմում է տարբեր երկներում ապրող մեր այն հայրենակիցների մասին, ովքեր մեծ հաջողություններ են արձանագրել տնտեսական կամ մշակութային գործունեության ասպարեզում: Հաղորդաշարը նպաստում է Հայրենիք-Սփյուռք տեղեկատվական շփումների սերտացմանը և Հայկական աշխարհի միասնական տեղեկատվական դաշտի ձևավորմանը:

«Առողջության երաշխիք»

Հաղորդաշարը լայն հանրությանը առարկայական զրույցի է հրավիրում առողջ ապրելակերպի, դեղորայքի, հիվանդությունների կանխարգելման և բուժման, սեփական և հանրային առողջության նկատմամբ նոր մշակույթի ձևավորման մասին: Մասնագետների կարծիքն ու մանավանդ հեռուստադիտողներին ուղղված օգտակար խորհուրդները հաղորդաշարը դարձնում են յուրատեսակ հեռուստատեսային բժշկական տեղեկատու և խորհրդատու:

«Ճակատագրով կինը»

Հաղորդաշարը վեր է հանում հանրային ճանաչում ունեցող կանանց կյանքի անծանոթ կողմերը, փորձում ավելի մարդկային լույսի տակ ուրվագծել նրանց բարդ ու հետաքրքիր կերպարը, մտերիմների, գործընկերների և հարազատների գնահատականների միջոցով ավելի մոտիկից շոշափել այն գաղտնիքը, որը տվյալ կնոջը դարձրել է այդքան հետաքրքիր և այդքան հանրահայտ:

Հաղորդաշարը նպաստում է հանրության մեջ կնոջ դերի և արժեքի մասին ավելի համարժեք պատկերացում ձևավորելուն:

«Ամբողջի մի մասը»

Հաղորդաշարը նվիրված է Հայաստանի ազգային փոքրամասնությունների էթնիկական ինքնության և մշակութային ինքնազգացողության խնդիրներին:

Ներկայացվում են մեր երկրում բնակվող ազգերի՝ ՀՀ տարածքում հիմնվելու պատմությունը, մշակույթը, միջմշակութային հարաբերություններն ու սոցիալական համակեցությունը հայ ժողովրդի և մյուս ազգերի հետ: Այս տեսակետից հաղորդաշարն ունի նաև ակնհայտ ճանաչողական բնույթ: Ի դեմս այլազգի մեր հայրենակիցների, հայ հեռուստադիտողի համար բացահայտվում են նոր,հետաքրքիր աշխարհներ:

«Կարծիք»

Այս հեղինակային հաղորդաշարն անդրադառնում է Հայաստանի մարզերում առկա բազմաբնույթ խնդիրներին և դրանց շուրջ ձևավորված հանրային կարծիքին:

«Գտնված երազ»

Հաղորդաշարին հյուրընկալվում են մշակութային, քաղաքական, տնտեսական, մարզական և այլ բնագավառներում հայտնի գործիչներ, որոնք անկեղծ ու մտերմիկ զրույցի ընթացքում փորձում են ներկայացնել այն ճանապարհը, որով փորձել են գտնել իրենց երազը՝ երջանկության մասին ունեցած իրենց տեսլականը:

«Ճառագայթ»

Ցվետանա Պասկալևայի այս հաղորդաշարը պատմում է այն մասին, թե ինչպես են մարդկանց համար նվիրական և կարևոր երևույթները բռնում ժամանակի քննությունը և ինչ կերպափոխումների են ենթարկվում: Հոգեբանի մասնակցությամբ փորձ է արվում գտնելու տարբեր խնդիրների լուծումը, ցույց տալու բազում բարդություններ հաղթահարելու հոգեբանական ելքեր:

«Սպասիր ինձ»

Այս հայ-ռուսական համատեղ հեռուստանախագիծն օգնում է գտնել երկար ժամանակ միմյանց փնտրող մարդկանց՝ վերամիավորելով շատ ընտանիքների, ովքեր զանազան տեխնածին, բնական աղետների կամ այլ արտակարգ դիպվածների պատճառով կորցրել են միմյանց:

«Զրույց»

«Զրույց» հաղորդաշարի նպատակը որևէ հանրային մեծ կարևորություն ունեցող խնդրի հանգամանալից քննարկումն է տվյալ խնդրի հետ առնչություն ունեցող հյուրի հետ: Հաղորդման ժանրը հեռուստատեսային զրույցն է, որը հնարավորություն է տալիս կամերային, «անաղմուկ» մթնոլորտում հնարավորինս խոր քննության ենթարկել խնդրո առարկան:

«Բախման կետ»

Հաղորդաշարի հեղինակ-վարող Արթուր Բախտամյանը մասնագետ հյուրերի հետ բանավեճ-քննարկում է բացում որևէ մշակութային խնդրի շուրջ՝ փորձելով վեր հանել դրա հանրային նպատակահարմարությունն ու կենսունակությունը: Քննարկումն ընթանում է ոչ այնքան հրապարակախոսական, որքան մշակութաբանական-վերլուծական հարթության վրա՝ շոշափելով նաև հենց հաղորդման ընթացքում ի հայտ եկող նորանոր խնդիրներ:

<u>Մշակութային (այդ թվում՝ ֆիլմեր)</u>

«Արվեստանոց»

Առհասարակ կրթության բնագավառում առանձնատուկ տեղ ունեն վարպետության դասերը՝ որպես ավագ և կրտսեր սերունդների երկխոսության և կուտակված փորձի փոխանցման վստահելի եղանակ:

Հենց այս ձևաչափով էլ ընթանում է այս հաղորդումը: Արվեստի որևէ ճյուղի հայտնի վարպետն անկաշկանդ ու մտերմիկ մթնոլորտում երիտասարդներին պատմում է իր անհատական փորձառությունը մասնագիտական կայացման, արվեստում հաջողության հասնելու գաղտնիքների և ճշմարիտ արվեստի չափանիշների մասին:

Վերջում հարց ու պատասխանի միջոցով ամփոփվում է թեման:

«Արվեստակիրներ»

Այս խորագրի ներքո ստեղծվել է երկու վավերագրական ֆիլմաշար, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 12 ֆիլմից: Տեսաֆիլմերը նախատեսված են հանդիսատեսի լայն լսարանի համար, ներկայացնում են մեր ազգային մշակույթում նշանակալի հետք թողած, ճանաչված անհատներին՝ նրանց, ովքեր սիրված են և՛ հայրենիքում, և՛ Հայաստանի սահմաններից դուրս:

Ֆիլմերին բնորոշ է անկեղծ ու անմիջական պատումը, երբ տաղանդավոր մարդը ներկայանում է իր ուժեղ ու թույլ կողմերով, ստեղծագործական փնտրտուքներով ու տարակուսանքներով: Մեր առջև նախ և առաջ մարդն է, ում, անշուշտ, խորթ չեն նաև մոլորությունները:

«Հայադարան»

Երակարատև լռությունից հետո հայկական հեռուստաեթերում փորձ է արվում ներկայացնել հայ գրականության մեծերի կյանքն ու ստեղծագործությունը հեռուստահաղորդման ուրույն լեզվով:

Բանաստեղծություններն ու արձակի պատառիկները հնչում են թարմ միզանսցենային միջավայրում՝ ապահովելով անհարկի պաթոսից զերծ մնալն ու լսարանի հետ հաղորդակցման բնականությունը:

«Ծագումով հայերը»

Հաղորդաշարը ներկայացնում է աշխարհասփյուռ այն տաղանդավոր հայերին, որոնց մասին քչերը գիտեն կամ բնավ չգիտեն:

Մի կողմից հեռուստադիտողը հայտնաբերում է իր մեծ հայրենակցին, մյուս կողմից՝ այդ մարդը վերստին հայտնաբերում է իր հայրենիքն ու վերագտնում ազգային ինքնությունը:

2013 թվականի ընթացքում առանձնացել են հետևյալ **ֆիլմերը և հեռուստասերիալները՝**

- **«Կյանքի կարուսել»**

Ֆիլմաշարի յուրաքանչյուր թողարկում առանձին պատմություն է ընտանեկան խնդիրների, անելանելի իրավիճակների, մարդկային բարդ հարաբերությունների, սիրո և դավաճանության, երջանիկ ավարտի կամ բաժանման մասին. ամեն երեկո այսպիսի սյուժեներով է հեռուստադիտողներին ներկայանում «Կյանքի կարուսելը» :

- **«Քույրը»**

Հեռուստասերիալի սյուժեն ծավալվում է սոցիալական տարբեր խավերի բախման ու պայքարի շուրջ: Երիտասարդ աղջիկը պայքարում է ապրելու, կյանքում իր տեղը գտնելու համար, մանավանդ, որ լավ պայմաններից հետո հայտնվել է հատակում և ստիպված է դիմակայել կյանքի նոր մարտահրավերներին:

- **«Մեր գյուղը»**

Այս հեռուստասերիալը Առաջինի՝ նոր, ավելի սեղմ ձևաչափով սերիալ նկարահանելու փորձ է: Սա պատմություն է մեր գյուղի և նրա մարդկանց մասին: Հացիվ և բանիվ ապրելու հավատամքով միմյանց դեմ դուրս եկած անհատների և նրանց շուրջը ծավալվող իրադարձություններն ուղեկցվում են բնաշխարհիկ հումորով և հոգեբանական նուրբ գույներով:

Ըստ էության, սա առաջին փորձն էր նաև սերիալային պատումի միջոցով ներկայացնելու մերօրյա գյուղի լույսն ու ստվերը, անկեղծ ու շիտակ հայացքով զննելու հայ գյուղացուն, նրա հոգսերն ու երազանքները:

- **«Հատուկ բաժին»**

Ոստիկանը և նրա մասնագիտական առօրյայի դժվարին ու հերոսական կողմերը դուրս են մնում հանրության ուշադրությունից: Այս մտահոգությամբ էլ «Հատուկ բաժին» սերիալի ստեղծագործական խումբը կերտել է աննկուն և արհեստավարժ ոստիկանների կերպարներ, որոնց համար իրենց աշխատանքը սոսկ աշխատանք չէ. այն ուժերի ամենօրյա լարում և պատասխանատվության զգացում պահանջող առաքելություն է:

- **«Շտապ օգնություն 3D»**

Յուրաքանչյուր սերիայում ներկայացվում են տարբեր սյուժեներ «Շտապ օգնության» աշխատանքի մասին: Իրադարձությունների անսպասելի շրջադարձերով հարուստ այս պատմությունները բացահայտում են մարդկանց առաջին բժկական օգնություն ցուցաբերողների դժվարություններն ու անձնուրաց վարքագիծը:

<u>Կրթական, մանկապատանեկան</u>

«Հանրալսարան»

Սա յուրատեսակ հեռուստատեսային համալսարան է, այստեղից էլ՝ «հանրալսարան» անվանումը, որը հուշում է հաղորդման լայն լսարանը և մատուցվող նյութի հանրամատչելիության հանգամանքը:

Հաղորդումն ունի պարզ կառուցվածք՝ դասախոս-լսարան, վերջում՝ հարց ու պատասխան: Դասախոսություններով հանդես են գալիս հանրապետության անվանի մասնագետները: Ներկայացվում են այնպիսի թեմաներ, որոնք գիտական հրատապությունից զատ ունեն նաև հանրային նշանակություն և շոշափում են վիճահարույց կամ դեռևս լուծման կարոտ խնդիրներ:

«Հայ ասպետ»

«Հայ ասպետը» հեռուստատեսային մրցախաղ է, որի գլխավոր նպատակն է նոր սերնդի ինտելեկտուալ դաստիարակությունը, ինչը գնահատվում է որպես ազգային անվտանգության գործոն:

Մայրենի լեզվի, գրականության, պատմության, աշխարհագրության, ազգային ավանդույթների և պարարվեստի մասին գիտելիքներով մրցակցող երեխաները ջանք ու եռանդ չեն խնայում լինելու առաջինը: Եվ յուրաքանչյուր ամսվա հաղթող թիմի հետ կազմակերպվում է հայրենաճանաչողական արշավ Հայաստանի որևէ պատմական վայր, որը նկարահանվում է և որպես հաղորդման հավելված ցուցադրվում: Հաղթող թիմը, բացի հովանավորչական պարգևներից, ստանում է գլխավոր մրցանակը՝ 7 օրյա շրջագայություն Արևմտյան Հայաստանով:

<u>Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության</u>

«Հայաստանի ճամփեքով»

Հաղորդաշարը կառուցված է հեռուստաճամփորդության ժանրի կանոններով: Նպատակն է Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների, մշակութային ծառանգության և ականավոր մարդկանց հանրահռչակումը: Սա հայրենաճանաչության յուրօրինակ հեռուստադաս է, որն առանց պարտադրանքի լսարանի ուշադրությունն է հրավիրում մեր հայրենիքի նյութական և մարդկային հարստության վրա, ձևավորում հոգածու և պատասխանատու վերաբերմունք սեփական մշակութային ունեցվածքի նկատմամբ:

«Օտար, ամայի ճամփեքի վրա»

Հաղորդաշարը յուրատեսակ հեռուստատեսային զբոսավարի դեր է կատարում, որն ասես հեռուստադիտողի «ձեռքից բռնած»՝ նրան ուղեկցում է աշխարհի զանազան երկրներով ու քաղաքներով: Այս հեռուստանախագծի ճանաչողական արժեքը ոչ միայն մեզանից անդին գտնվող պատմաճարտարապետական հուշարձաններին ու տեսարժան վայրերին տեղեկանալն է, այլև զանազան քաղաքակրթական համալիրների և մշակույթների առանձնահատկություններին առնչվելը: Այս առումով հաղորդաշարն ունի ևս մեկ շահեկան կողմ. յուրաքանչյուր արտասահմանյան ճամփորդության ժամանակ ներկայացվում է տեղի հայությունը և նրա ունեցած ավանդը տվյալ երկրի մշակութային և տնտեսական կյանքում:

«Այբ, բեն, գիմ»

Այս հաղորդաշարի հեղինակն ու վարողն ականավոր թատերագետ-մշակութաբան, ՀՀԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանն է: «Այբ, բեն, գիմ»-ի թեման հայոց լեզուն է՝ իր զարգացման, ինչպես նաև կերպափոխումների ու աղավաղումների հոլովույթում: Հեղինակը լսարանին հիշեցնում է գրավոր և բանավոր խոսքի կանոնական հիմքերը և հորդորում հրապարակային խոսքում դրսևորել պատասխանատու լեզվական վարքագիծ:

Հաղորդման հյուրերն են մտավորականներ, ովքեր ներկայացնում են լեզվավիճակի հետ կապված իրենց մտահոգությունները:

«Հայաստանի առեղծվածները»

Ինչպես բոլոր հին քաղաքակրթական բնօրրաններում, այնպես էլ Հայաստանում առասպելի և իրականության սահմանները հաճախ հատվում են, և հաճախ դժվար է լինում զատել ճշմարտությունը հորինվածքից: Ահա այդպիսի առեղծվածային խնդիրների բացահայտմանն է նվիրված Ստեփան Զաքարյանի հեղինակային հաղորդումը:

Բոլոր վիճահարույց խնդիրները հաղորդման ընթացքում վեր են հանվում բացառապես գիտության փաստարկված լեզվով. բոլոր նոր, թարմ վարկածներն առաջ են քաշում միայն մասնագետները, ինչը պատշաճ է Առաջին ալիքի ոգուն և առաքելությանը:

«Անբացատրելին»

Հանրության մեջ ժամանակ առ ժամանակ մեջտեղ են գալիս բնության և հասարակության մեջ նկատվող այսպես կոչված «պարականոն» երևույթների մասին սիրողական քննարկումներ, որոնք ավելի են խճճում հարցը՝ մեզ ավելի հեռացնելով ճշմարտությունից:

«Անբացատրելին» գիտահանրամատչելի հաղորդաշարի նպատակը այս խնդրում պարզություն մտցնելն է և անլուծելի թվացող երևույթների համարժեք ընկալման ձևավորումը: Մասնագետները փորձագիտական մակարդակով անդրադառնում են քննարկվող տարբեր տեսանկյուններից. հաճախ նաև հայտնվում են իրարամերժ կարծիքներ:

«Հայոց հարց»

Հաղորդաշարն անդրադառնում է հայտնի պատմական իրադարձություններին ու հայ ժողովրդի պատմության մեջ դարակազմիկ նշանակություն ունեցած դեպքերին և դեմքերին: Ծավալվող քննարկումների նպատակը պատմական ճշմարտությունները ստից և թյուրմբռումներից քողազերծելն ու վերահիմաստավորելն է:

<u>Մարզական</u>

«Շախմատ-64»

Հաղորդաշարի մեկնաբանը նախ ներկայացնում է վերջին օրերին կայացած մրցաշարերի արդյունքները, տեղեկություն տալիս մեր մարզիկների մասնակցության մասին, ապա ընտրում է առավել հետաքրքիր պարտիաներից մեկն ու խաղատախտակին ցուցադրում այն: Այդ ընթացքում նա ոչ միայն քայլերը կատարում է ըստ հերթականության, այլև փորձում է վերլուծել պարտիան, գտնել հնարավոր վրիպումները, մատնանշել ուժեղ քայլերն ու նորամուծությունները: Թողարկման ավարտին մեկնաբանը ներկայացնում է շախմատի աշխարհին վերաբերող հումոր, ներկայացնում զավեշտալի դեպքեր մեծ շախմատիստների կյանքից:

«Շախմատի աշխարհ»

Շախմատի մասին այս մի հաղորդումը ներկայացնում է շախմատային աշխարհի կարևոր իրադարձությունները, հաղորդաշարի հյուրերի հետ քննարկում Հայաստանում շախմատային կարևոր միջոցառումներն ու շախմատի զարգացման նախադրյալներն ու ուղղությունները, հանրակրթական դպրոցներում շախմատի՝ որպես ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետության և շախմատային աշխարհի լավագույնների մասին պատմող տեսանյութեր ու սյուժեներ:

<u>Երաժշտական</u>

«Թոփ 10»

Հաղորդաշարը ներկայացնում է ժամանակակից հայ էստրադային երգերի օրվա վարկանիշային սանդղակը՝ տասից մինչև առաջին տեղը:

Ցուցադրվում են բոլոր տասը երգերը՝ հաղորդավարի մեկնաբանություններով:

«Երաժշտական փոստարկղ»

Սա Առաջինի ամենաերկարակյաց երաժշտական հաղորդումն է, որը հեռուստադիտողին վերադարձնում է ընդհուպ 70-ական թվականները:

Այսօր էլ վաստակաշատ հաղորդավար Սուսաննա Շահինյանը մեկ առ մեկ ընթերցում է հանրապետության մարզերից, Արցախից և Սփյուռքից ստացված բոլոր նամակները և առաջարկում վայելել պատվիրված երգն ու երաժշտությունը:

Մատուցվում են հին ու բարի հիշողություններ արթնացնող բազմաժանր ու բազմազան ստեղծագործություններ՝դասական, ազգային, ժողովրդական, ազգագրական, հայկական և արտասահմանյան էստրադա, հեղինակային երգ և երաժշտական նորություններ:

«Երգ երգոց»

Հաղորդաշարի թեման հայ երգն է՝ սկսած միջնադարյան տաղերից մինչև 80-ականների վերջի հեղինակային երգը: Առանձին հաղորդումներ են նվիրվում հայ անվանի կոմպոզիտորների և նրանց երգային ստեղծագործությանը, զանազան հոբելյանական առիթներով հնչում են սիրված երգեր: Հանրապետության շնորհալի երգիչների կատարումներին զուգահեռ հատուկ պատրաստված ժամանակագրական տեսաֆիլմերով ներկայացվում է տվյալ երգի կամ հեղինակի ժամանակաշրջանի սոցիալական-քաղաքական-տնտեսական համատեքստը՝ հաղորդումը օժտելով նաև ճանաչողական ոչ պակաս կարևոր գործառույթով:

Հաղորդման բովանդակային նյութին համապատասխան հրավիրվում են հյուրեր, ովքեր իրենց մեկնաբանություններով և հուշերով ամբողջացնում են տվյալ թեմայի համակողմանի լուսաբանումը:

«Երևան ջազ»

Համաշխարհային և հայկական ջազին նվիրված այս հաղորդաշարն ունի թե՛ տեղեկատվական, թե՛ ճանաչողական բնույթ:

Յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ներկայացվում է հայաստանյան ջազային մի խումբ, հնչում են հանրահայտ և լեգենդար ջազային աստղերի կատարումներ «Հայկական ջազի 70 տարին» փառատոնի շրջանակներում տեղի ունցած համերգներից, ներկայացվում են ջազային ժանրի ճանաչված հայազգի ջազմեններ:

Սա հաղորդաշար է, որն ամեն անգամ լինելով եթերում, ի զորու է հեռուստացույցի մոտ գամել ջազի սիրահարներին և գրավիչ ռիթմերով հրաշալի րոպեներ պարգևել նրանց:

Զվարճալի-ժամանցային

«Համեղ մենամարտ»

Երկու հանրահայտ անձ մրցում են միմյանց հետ իրենց խոհարարական վարպետությամբ՝ հընթացս հեռուստադիտողին իրազեկելով աշխարհի ազգային խոհանոցների գաղտնիքներին: Բայց խոհանոցն այս ժամանցային թոք-շոուի ոչ թե նպատակն է, այլ միջոցը: Եռանդուն մոդերատորը խոհանոցային դիմակայության ֆոնի վրա նրբորեն բացահայտում է մենամարտի մասնակիցների կյանքի և մասնագիտական գործունեության անհայտ էջեր՝ միաժամանակ նրանց հրավիրելով բանավիճային աշխույժ երկխոսության:

«Արի ու տես»

«Արի ու տես»-ն ըստ էության, շաբաթվա հաղորդումների տեսությունն է՝ դինամիկ, հետաքրքիր սյուժեներով: Հաղորդավար Գոհար Գասպարյանը և հաղորդաշարերի ստեղծագործական խմբերի անդամները հրավիրում են հեռուստադիտողին գալ և տեսնել այն, ինչ վարագույրից այն կողմ է՝ փորձեր, տեխնիկական նախապատրաստում, հարցազրույցներ:

«Իմ տաղանդավոր ընտանիքը»

Հաղորդման նպատակը տարբեր ունակություններ ունեցող ընտանիքներին բացահայտելն է: Նախագիծը մրցութային է, և մասնակից ընտանիքներն իրար հետ մրցում են երգի, պարի, բեմական խոսքի, ակրոբատիկայի և այլ ասպարեզներում:

«Առավոտ լուսո»

Ժամանցային-տեղեկատվական այս հաղորդումով բացվում է Առաջինի հեռուստատեսային օրը: Մեկ հաղորդման մեջ առկա են միանգամից մի շարք ժանրեր՝ հարցազրույց, սյուժե, ակնարկ, լրատվություն, ռեպորտաժ: Նպատակն է հեռուստադիտողին հաղորդել օրվա ռիթմը, զուգահեռաբար՝ ներկայացնել կենցաղային օգտակար խորհուրդներ և անցած շաբաթվա կարևոր իրադարձությունների համատեքստում զրույցի հրավիրել մարդկանց, ովքեր անկաշկանդ մթնոլորտում հակիրճ բացատրում են այս կամ այն իրողության հանրային նշանակությունն ու ակնկալվող արդյունքը:

Թեմաները բազմազան են՝ արվեստ, շոուբիզնես, նորաձևություն, սպորտ, առողջապահություն և այլն:

«Հայ-Q»

Այս ինտելեկտուալ հեռուստախաղի նպատակը հեռուստադիտողների գիտելիքների հարստացումն ու տրամաբանական ունակությունների խթանումն է: Հաղորդման

ընթացքում բազմաբնույթ հարցերի միջոցով որոշվում է մասնակիցների բանականության գործակիցը՝ I Q-ն, կամ ինչպես հաղորդումն է սրամտորեն կոչվում՝ Հայ-Q-ն:

Հաղթողներն արժանանում են դրամական պարգևի, ինչն ավելի մրցակցային ու դիտարժան է դարձնում հեռուստախաղը:

<u>Այլ հաղորդումներ</u>

Հաշվետու ժամանակահատվածում Հանրային հեռուստաընկերության եթերում շարունակվել են հեռարձակվել պետական մարմինների կողմից պատրաստվող հետևյալ գերատեսչական հաղորդումները՝

«Խորհրդարանական շաբաթ»

Այս լրատվական հաղորդաշարը լուսաբանում է ՀՀ Ազգային ժողովի քառօրյա նիստերի ընթացքը, որտեղ պատգամավորները, պատգամավորական խմբերն ու խմբակցությունները հանդես են գալիս հայտարարություններով: Հեռարձակվում են նաև պատգամավորների հարցերը կառավարությանը:

«Հրապարակում»

Այս լրատվական հաղորդաշարը լուսաբանում է ՀՀ կառավարության ընթացիկ գործունեությունը: Ներկայացվում են կառավարության ընդունած որոշումների հանրային նշանակությունն ու ակնկալվող արդյունքները, տարբեր ոլորտներում գործադիր իշխանության ծրագրերի իրականացման ընթացքն ու փաստացի արդյունքները:

«Զինուժ»

Այս լրատվական-տեղեկատվական հաղորդաշարը լուսաբանում է ՀՀ Զինված ուժերի գործունեությունը, բանակի առօրյան, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատանքային խնդիրները, հայ-ադրբեջանական պետական սահմանում իրականացվող մարտական հերթապահության ընթացքը, զորամասերի ծառայողական առօրյան, բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկնող սպաների դիմանկարները, Արցախյան ազատամարտում և ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված մարտիկների, ինչպես նաև բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկնող ժամկետային զինծառայողների դիմանկարները:

Բանակային կյանքի բազմաբովանդակ լուսաբանմամբ հագեցած է նաև «Զինուժի» կիրակնօրյա թողարկումը:

«02»

ՀՀ ոստիկանության «02» լրատվական-տեղեկատվական հաղորդաշարը իրազեկում, պարզաբանում և վերլուծում է հանրապետության քրեական իրավիճակի շարժընթացը, ներկայացնում ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների

բացահայտումները, լուսաբանում ոստիկանության գործունեությունն ու խնդիրները, նպաստում հասարակության իրավագիտակցության բարձրացմանը:

Հեռուստահաղորդումների հեռարձակում

2013 թվականին Հանրային հեռուստաընկերության «Առաջին» ալիքի և արբանյակային ալիքի հաղորդումները հեռարձակվել են օրական 24 ժամ:

Հայաստանում հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, իսկ արբանյակային հեռարձակումը՝ «Գլոբ Քասթ Ֆրանս» ընկերության միջոցով: Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է նաև իր աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում կաբելային կապուղիներով հեռուստաընկերության հաղորդումները վերահեռարձակելու ուղղությամբ, միաժամանակ իրականացրել է «Առաջին» ալիքի համաժամանակյա ինտերնետային հեռարձակում www.1tv.am ինտերնետային կայքէջում՝ սփյուռքյան համայնքների համար ավելի հասանելի դարձնելով հաղորդումների դիտումը: Մասնավորապես, հաշվի առնելով ԱՄՆ-ում հայկական մեծ սփյուռքի առկայությունը՝ 2013 թվականին Հանրային հեռուստաընկերության հաղորդումները շարունակվել են հեռարձակվել «Գլոբ Քասթ Ֆրանս» ընկերության կողմից՝ ապահովելով հեռուստաալիքի տարածումը հեռախոսային և կաբելային հեռարձակում իրականացնող ընկերությունների միջոցով («Գլոբ Քասթ Ֆրանս» ընկերությունը սպասարկում է ԱՄՆ-ի տարածքի մոտ 30%-ը): Ֆրանսիայում կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները հեռարձակվում է ֆրանսիական տարբեր ընկերությունների կողմից:

ԱՊՀ երկրներում՝ հատկապես Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում, ինչպես նաև Վրաստանում շարունակել են աճել Հանրային հեռուստաընկերության հաղորդումների կաբելային ցանցով հեռարձակման ծավալները:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հանրային հեռուստաընկերությունը 2013 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից և հովանավորությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.02 «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ՀՀ պետական բյուջեից Հանրային

հեռուստաընկերությանը նախատեսվել էր հատկացնել 2,333,173.3 հազ. դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով: Տարվա ընթացքում ՀՀ կառավարության 20.12.2012թ. N 1616-Ն որոշման հիման վրա Հանրային հեռուստաընկերությանը լրացուցիչ հատկացվել է 4,181.2 հազ.դրամ, 27.06.2013թ. N 661-Ն որոշման համաձայն՝ 768.2 հազ.դրամ և 18.07.2013թ. N 781-Ն որոշման համաձայն՝ 4,774.6 հազ.դրամ:

Այսպիսով, 2013 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է 2,342,897.3 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ: Բացի այդ, համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1500-Ա որոշման, Հանրային հեռուստաընկերությանը տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման գծով աշխատանքների ֆինանսավորմանն աջակցելու նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով, որպես նվիրաբերություն, հատկացվել է 850,000.0 հազ. դրամ, որից 2013 թվականին 149,555.8 հազ. դրամը ճանաչվել է որպես ակտիվներին վերաբերող շնորհորից եկամուտ՝ ակտիվների մաշվածությանը զուգընթաց:

Հանրային հեռուստաընկերությունը 2013 թվականին պլանավորել էր եկամուտների այլ աղբյուրներից ստանալ 921,164.1 հազ. դրամ գումար: Ստացված փաստացի եկամուտները կազմել են 985,501.9 հազ. դրամ (առանց ակտիվներին վերաբերող շնորհների): Տարբերությունը հիմնականում պայմանավորված է հովանավորության և այլ եկամուտների աճով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության կողմից 2013 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 4

2013 թվականին Հանրային հեռուստաընկերության եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների

(հազ. դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակները	Գումար
1	**Ընթացիկ դրամաշնորհ**	**2,342,897.3**
2	**Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ**	**273,328.6**
3	**Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում**	**985,501.9**
3.1	Առևտրային գովազդ	703,778.1
3.2	Հովանավորություն	131,963.7
3.3	Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք	71,778.1

3.4	Վճարովի եթերաժամանակ	26,227.2
3.5	Այլ եկամուտներ	51,754.8
Ընդամենը		**3,601,727.9**

Աղյուսակի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցներով ձեռքբերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2013 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության 2013 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 5

2013 թվականին Հանրային հեռուստաընկերության ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղությունները	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	1,446,672.1
2	Արտադրական ծախսեր	1,299,930.3
3	Հեռարձակման ծախսեր	642,480.7
4	Այլ ծախսեր	199,437.9
5	Շահութահարկի գծով ծախս	10,760.0
Ընդամենը		**3,599,281.0**

Աշխատավարձ, հավելավճարներ և այլ վարձատրություններ ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 40.2%-ը և հիմնականում ներառել է հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև հեռուստահաղորդումների ստեղծագործական խմբերի և ֆիլմերի/սերիալների կրկնօրինակման վարձատրության ծախսերը:

Արտադրական ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 36.1%-ը և ներառել են հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը, գործուղման, տրանսպորտային և կոմունալ ծախսերը, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, գրասենյակային ապրանքների, արտադրական նյութերի, պահեստամասերի և կապի ծառայությունների ձեռքբերման ծախսերը, ինչպես նաև շենքերի, շինությունների պահպանման, տնտեսական և ընթացիկ նորոգման ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 17.9% և ներառել են ՀՀ տարածքում և արբանյակային կապով ՀՀ տարածքում և արտասահմանում հեռարձակման, ինչպես նաև ինտերնետային հեռարձակման ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 5.5%-ը և ներառել են ներկայացուցչական և աուդիտի ծախսերը, հարկերը (բացառությամբ շահութահարկի), տուրքերը և այլ ծախսերը:

2013 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով պետական ՀՀ բյուջե է վճարվել 473,944.30 հազ. դրամ գումար:

Հանրային հեռուստաընկերությունը 2012 թվականի գործունեության արդյունքներով 2013 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարել 12,677.6 հազ. դրամ շահութաբաժին:

2013 թվականին Հանրային հեռուստաընկերությունը տեխնիկական վերազինման նպատակով ներգրավված վարկային միջոցների հաշվին հեռուստատեսային տեխնիկական միջոցների և այլ հիմնական միջոցների ձեռքբերմանն ու արդիականացմանն է ուղղել 807,357.5 հազ. դրամ, որի հաշվին իրականացվել են հետևյալ ձեռքբերումները. «Առաջին» լրատվական ծառայության թվային նոր տեխնիկական համալիրի և հաղորդումների նկարահանման թվային (HD) տեխնիկական միջոցների ձեռքբերում՝ 703,191.8 հազ. դրամ, արտադրական նպատակներով համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 89,405.8 հազ. դրամ, ավտոմատ հեռախոսակայանի ձեռքբերում՝ 9,300.0 հազ. դրամ, անվտանգության համակարգի ձեռքբերում՝ 5 460.0 հազ. դրամ:

2013 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ներգրավված վարկային միջոցների հաշվին իրականացրել է նաև կապիտալ նորոգման աշխատանքներ՝ 287,625.5 հազ. դրամ ընդհանուր գումարով, մասնավորապես՝ «Երևան ստուդիա»-ի մասնաշենքի վերակառուցման (այդ թվում՝ հին կաթսայատան ապամոնտաժման) աշխատանքներ՝ 133,665.7 հազ. դրամ, «Երևան ստուդիա»-ի մասնաշենքի, «ԱՍԲ-1», «ԱՍԲ-7» տաղավարների և դրանց հարակից տարածքների ջերմամատակարարման, սառնամատակարարման և օդափոխության համակարգերի ներդնում՝ 93,262.4 հազ. դրամ, կաթսայատան կառուցման, գլխավոր մասնաշենքի ջեռուցման ցանցի վերակառուցման աշխատանքներ՝ 33,128.4 հազ. դրամ, արհեստանոց-պահեստների քանդում, միջտարածքային ճանապարհի կառուցում՝ 16,483.1 հազ. դրամ, տարածքի բարեկարգում՝ շինությունների ապամոնտաժում, բացօթյա ավտոկանգառի կառուցում՝ 10,091.6 հազ. դրամ, պոմպակայանի, ջրառի, անցուղու և ջրամատակարարման, ջերմամատակարարման ներհիրապարակային ու ներքին ցանցերի վերակառուցման աշխատանքներ՝ 994.2 հազ. դրամ:

Տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման նպատակով 2013 թվականին ներգրավված վարկային միջոցների զգալի մասը մարվել է ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1500-Ա որոշմամբ Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը, որպես նվիրաբերություն, տրամադրված 850,000.0 հազ. դրամ գումարի հաշվին:

Տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման գործընթացը շարունակական բնույթ է կրում և Հանրային հեռուստաընկերությունը յուրաքանչյուր տարի նախատեսում է իրականացնել տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման աշխատանքների ծրագիր՝ հաշվի առնելով այդ ուղղություններով նախատեսվող ֆինանսական միջոցներն ու առաջնահերթությունները:

5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

2013 թվականին «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը և օրական հեռարձակել է ռադիոհաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր»՝ 24 ժամ, «Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո»)՝ 24 ժամ, արտասահմանի համար հեռարձակվող հաղորդումներ՝ 3 ժամ:

Հանրային ռադիոընկերությունը 2013 թվականին օբյեկտիվ և բազմակողմանի ներկայացրել է հասարակական և քաղաքական կյանքն իր բոլոր ասպարեզներով ու բնագավառներով: Այս առաջնային սկզբունքները որպես անկյունաքար դրվել են Հանրային ռադիոընկերության՝ օրենքով նախատեսված հիմնական գործառույթները իրականացնելիս բոլոր ուղղություններով, թե՛ Հայաստանի ու Արցախի, թե՛ սփյուռքի անցուդարձը լուսաբանող ամենօրյա հաղորդումներում: Հանրային ռադիոընկերության նպատակը եղել և մնում է՝ հնարավորինս ընդգրկուն տեղեկություններ ստանալու քաղաքական, տնտեսական, մշակութային ու այլ կենսական ոլորտների իրադարձությունների և միտումների վերաբերյալ հանրության սահմանադրական իրավունքի ապահովումը:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեից Հանրային ռադիոընկերությանը՝ ընթացիկ գործունեությունն ապահովելու նպատակով հատկացվել է 648,935.90 հազ. դրամ գումար ընթացիկ դրամաշնորհ:

Ռադիոհաղորդումների պատրաստում

Հանրային ռադիոընկերությունը ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին»

ՀՀ օրենքով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, ինչպես նաև իր կանոնադրությամբ: 2013 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերությունը պատրաստել և հեռարձակել է ընդհանուր առմամբ 19,162.5 ժամ ծավալով ռադիոհաղորդումներ՝ համաձայն ստորև բերված Աղյուսակ 6-ում նշված թեմատիկ ուղղությունների:

Աղյուսակ 6

2013 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալներն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հաղորդումների հեռարձակման ծավալները (ժամ)
1	**«Առաջին ծրագիր»**	**8,760.0**
1.1	Լրատվական-վերլուծական	1,539.6
1.2	Քաղաքական,տնտեսական, հասարակական	161.2
1.3	Մշակութային, պատմական	1,226.4
1.4	Մանկապատանեկան	644.8
1.5	Կրթական և հայոց լեզու	286.0
1.6	Երիտասարդական, մարզական	800.6
1.7	Ժամանցային	736.5
1.8	Հոգևոր հաղորդումներ	242.7
1.9	Երաժշտական	3,122.2
2	**«Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո»)**	**8,760**
3	**Արտասահմանի համար պատրաստվող հաղրդումներ**	**1,095.0**
4	**Ինտերնետային կայքէջի համար պատրաստվող հաղորդումներ**	**547.5**
Ընդամենը		**19,162.5**

Գծապատկեր 3. 2013 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից «Առաջին ծրագիր» -ով հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները (%)



Հանրային ռադիոընկերության ծրագրային քաղաքականության մեջ 2013 թվականին առանձնահատուկ տեղ են ունեցել հաշմանդամների և տարեցների, ընտանիքի, կանանց, երեխաների, մանկավարժների, բժիշկների, զինվորականների, գյուղացիների, արվեստագետների, ուսանողների և սոցիալական այլ խմբերի հիմնահարցերին վերաբերող հաղորդումներն ու հաղորդաշարերը: Ուշադրության առարկա են եղել գրեթե բոլոր ոլորտների և բնագավառների իրավական կարգավորմանն առնչվող հարցերը:

Կարևորվել է Հանրային ռադիոընկերության եթերի հավասարակշռվածությունը, ներկայացվել են թե՛ իշխանական և թե՛ ընդիմադիր գործիչների տեսակետները: Պետական և քաղաքական նշանակության իրադարձությունները մշտապես գտնվել են հանրային ռադիոընկերության տեսադաշտում: Ներկայացվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտների առավել ուշագրավ իրադարձությունները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և Ազգային Ժողովի գործունեությունը: ՀՀ Ազգային Ժողովի դռնբաց նիստերն ուղիղ եթերով հեռարձակվել են գերկարճ 69.7 Մhg հաճախականությունով:

<u>Լրատվական և տեղեկատվական հաղորդումներ</u>

Լրատվական և տեղեկատվական հաղորդումները անդրադարձել են քաղաքական, տեղական-լրատվական, հասարակական-քաղաքական, մարզական և այլ բնույթի իրադարձություններին: Լրատվական ծառայության սկզբունքներն են՝ օպերատիվությունը, տեղեկատվության անաչառ մատուցումը և բազմակարծության ապահովումը: Ընդգրկուն է նաև լրատվության աշխարհագրությունը՝ Լեռնային Ղարաբաղ, Ջավախք, Սփյուռքի գաղթօջախներ, ՀՀ մարզեր, միջազգային անցուդարձ:

«Ռադիոլուր»

«Ռադիոլուր» լրատվական-վերլուծական հաղորդումը 2013թ. եթեր է հեռարձակվել աշխատանքային օրերին յուրաքանչյուր ժամագլխին 10-15 րոպե տևողությամբ, իսկ շաբաթ և կիրակի օրերին երեքական թողարկում՝ հարկ եղած դեպքում նաև հավելյալ եթերաժամերով:

Հիմնական թողարկումը (58 րոպե տևողությամբ) ռադիոլսողին է ներկայանում ամեն օր՝ ներառելով օրվա ամբողջ լրահոսը և օրվա կարևորագույն թեմաների վերաբերյալ վերլուծական նյութեր: Օրվա ամբողջ լրահոսը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, տեղադրվում է ընկերության www.armradio.am կայքէջում, ուր տեղադրվում են նաև օրվա գլխավոր թողարկման ձայնագրությունը և արխիվը:

«Արմենիա»

Ռուսախոս լսարանի համար աշխատում է **«Արմենիա»** լրատվական-վերլուծական հաղորդումը, որը հեռարձակվում է աշխատանքային օրերին 15 րոպե տևողությամբ:

«Երևան» ծրագիր

«Երևան» ծրագիրն ամենօրյա հաղորդումների շարք է, որի թեմատիկան ընդգրկում է մայրաքաղաքին վերաբերող տարբեր ոլորտները և ներկայացնում է մայրաքաղաքի վարչական շրջաններում կատարված աշխատանքները, մայրաքաղաքում կառավարման հաջողություններն ու բացթողումները, արձագանքում բնակիչների դիտողություններին և առաջարկություններին: Կատարվել են նաև լրագրողական քննություններ քաղաքային տնտեսության, տրանսպորտի, սանիտարական ծառայությունների, արտաքին լուսավորության, բնակարանային ֆոնդի պահպանության, քաղաքաշինության, ճարտարապետության, վթարային շենքերի ամրացման, փողոցների նորոգման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների արդյունավետության, բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Ներկայացվել են Երևանի հյուրերը, նրանց տպավորությունները և համեմատություններ այլ քաղաքների հետ: Բոլոր հաղորդումները տեղադրվում են www.yerevan.armradio.am կայքէջում:

«**Երևանի ձայն**»

«Երևանի ձայն»-ը արտասահմանի համար պատրաստվող լրատվական հաղորդում է, որը պատրաստվել է 13 լեզուներով՝ ռուսերեն, վրացերեն, պարսկերեն, եզդիերեն, քրդերեն, ասորերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն: Այն օտարերկրյա ունկնդիրներին և աշխարհասփյուռ հայությանն է ներկայացնում հայաստանյան իրադարձությունները, ծանոթացնում Հայաստանի պատմությանը, արծարծում Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը, Հայ դատի և ցեղասպանության ճանաչման հարցերը: Սփյուռքում ապրող շատ հայեր, չիմանալով մայրենի լեզուն, հայրենիքից տեղեկատվություն են ստանում այն լեզվով, որին նրանք տիրապետում են: Արտասահմանի համար տրվող հաղորդումները տեղադրվում են Հանրային ռադիոընկերության ինտերնետային www.armradio.info կայքէջում: Կայքում տեղադրվում են հաղորդումների տեքստերը և ձայնագրությունները, ինչը հնարավորություն է տալիս հաղորդումները կարդալ ու լսել օրվա ցանկացած ժամին, ինչպես նաև պահոցի միջոցով ծանոթանալու նախորդ օրերի հաղորդումներին: Արտասահմանի համար տրվող հաղորդումները ծառայում են նաև Հայաստանի արտաքին քաղաքականության իրազեկման նպատակին:

<u>Քաղաքական,տնտեսական, հասարակական հաղորդումներ</u>

«Հայ իրազեկում»

Հայաստանի ու հայության անվտանգության, գոյավիճակի, զարգացումների վրա ազդող կարևորագույն հանգամանքների և ընդհանուր վերելքի համար անհրաժեշտ նախապայմանների մասին է **«Հայ իրազեկում»** հաղորդաշարը:

«Աշխարհը և հայերը»

«Աշխարհը և հայերը» հաղորդաշարը ընդգրկում է այնպիսի թեմաներ, որոնք նույն օրը, կամ մեկ օր առաջ հրապարակվել են միջազգային ոչ հայերեն լրատվամիջոցներում և վերաբերում են Հայաստանին կամ հայերին: Թեմաները հիմնականում սոցիալ-մշակութային ոլորտից են, բայց կան նաև քաղաքական ու տնտեսական անդրադարձեր:

«Հատվող եթեր»

«Հատվող եթեր» հաղորդաշարը հրատապ անդրադարձ է հանրապետության քաղաքական, տնտեսական, հասարակական, սոցիալական հարցերին՝ ոլորտին քաջատեղյակ և հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ:

«Կամուրջ» Հայաստան-Սփյուռք

«Կամուրջ» Հայաստան-Սփյուռք ծրագիրն առաջնորդվում է «Հայաստանը համայն հայության հայրենիքն է» կարգախոսով: Ամենօրյա հաղորդաշարը սփյուռքի և հայրենիքի բազմաբնույթ կապերի արծարծման խնդիր ունի: Թեմատիկ կողմնորոշմամբ այս ծրագիրն ընդգրկում է հայության երկու մեծ հատվածների գործնական կապերի ողջ ներկապնակը: Ներդրումներ, սփյուռքահայ բարերարների գործունեություն հայրենիքում, կրթամշակութային ձեռնարկումներ, հայկական գրասենյակների գործունեության լուսաբանում, սփյուռքահայ ականավոր գործիչների այցելություններ Հայաստան, հայրենիքի հետ կապերին խոչընդոտող օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրների վերհանում: Ծրագիրն ունի «Մեր մեծերը» խորագրով հաղորդաշար, որի գլխավոր նպատակը հայրենանվեր անհատների ճանաչողությամբ սերնդի մեջ ազգային արմատների, ինքնության ճանաչմանն ու հայեցի դաստիարակությանը նպաստելն է: Հաղորդաշարը համագործակցում է ՀՀ Սփյուռքի նախարարության և «Հայաստան համահայկական հիմնադրամ»-ի հետ:

<u>Մշակութային և պատմական հաղորդումներ</u>

Մշակութային հաղորդումները շարունակաբար ձգտում են տեսադաշտում պահել հանրապետության մշակութային կյանքի անցուդարձը, լինել մտավորականության խոսափողը պետությանը և ժողովրդին մտահոգող բոլոր կենսական հարցերում: Հեռուստատեսության և ինտերնետի առկայությունը ստիպում է վերանայելու ռադիոեթերում գրականությունը, արվեստը և առհասարակ մշակույթն արտացոլելու ավանդական ձևերը և որոնել-գտնելու առավել ինքնատիպ արտահայտվելու շահեկան ձևեր:

«Վերնատուն»

«Վերնատուն» հաղորդաշարում 2013 թվականին ուղիղ եթերում պարբերաբար կազմակերպվել են զրույցներ անվանի արվեստագետների հետ՝ մշակութային

համակարգն գործնականում աշխուժացնելու ռազմավարության և այլ կարևոր հիմնախնդիրների շուրջ:

«Ժամանակի վկան»

«Ժամանակի վկան» հաղորդաշարը պարբերաբար անդրադարձել է անցյալ և ներկա պատմական իրադարձություններին, ներկայացրել պատմական, հայագիտական, մշակութաբանական ուսումնասիրություններ, նոր տեսակետներ և բացահայտումներ:

Մշակութային **«Մեկ դերասանի թատրոն», «Մեր ձայնադարանի ֆոնդից»** հաղորդումները և **«Ռադիոթատրոն»-ը** ունկնդրին են ներկայացրել ռադիոյի հարուստ ֆոնդում պահպանվող հայ դասական և ժամանակակից գրողների, համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների ձայնագրությունները: Մեր օրերում ստեղծված գրականությունը մեզ է ներկայացրել **«Գրական հանդիպումները»**: Համաշխարհային ճանաչում ունեցող հայ և օտարազգի անվանի մարդկանց, աշխարհի տարբեր ժողովուրդների իմաստուն, թևավոր և բարոյախրատական մտքերով են պատրաստվում **«Ասույթներ» և «Առածանի»** հաղորդումները: **«Պոեզիա»** հաղորդաշարը ունկնդրին է ներկայացնում հայ և համաշխարհային քնարերգության լավագույն նմուշները, անդրադառնում տարբեր սերնդի ստեղծագործություններին: **«Նրանք ապրում են մեզ հետ»** հաղորդումը նվիրված է Հայաստանը փառավորած մեր հայրենակիցներին, ովքեր դարձել են մեր հպարտությունն ու պարծանքը, և բոլոր նրանց, ովքեր, լինելով մեր երկրում, այն դարձրել են իրենց ճակատագրի մի մասնիկը:

Մեր թատրոնի առօրյան, խնդիրներն ու հաջողություններն է ներկայացնում **«Կուլիսներ»** հաղորդումը: Հայաստանի Ազգային արխիվի գաղտնազերծված նյութերով հանրահայտի անհայտ կողմերն է բացահայտում **«Թղթապանակ N»** հաղորդումը:

Մշակութային ծրագրերը տարվա ընթացքում ընդգրկել են հայ ժողովրդի երևելիների հոբելյանները՝ երիտասարդ ունկնդրին ճանաչելի դարձնելով այն մտավորականներին և արվեստագետներին, որոնց ստեղծածը հուսալի հենարան է կյանք մտնող սերունդների համար:

«Հայաստանը մեր տունն է» հաղորդումը պարբերաբար ներկայացրել է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքը:

<u>Մանկապատանեկան հաղորդումներ</u>

Հանրային ռադիոընկերությունը հեռարձակել է նաև մի շարք մանկապատանեկան հաղորդումներ (**«Զարթուցիչ», «Պատանեկան ակումբ», «Մեկնարկ», «Երեք ույու չորս», «Կար-չկար», «Պստիկաշեն»**), որոնք հեռարձակվել են ամեն օր միջինը 60 րոպե ընդհանուր տևողությամբ: Հաղորդումներն ուղղված են տարբեր տարիքային խմբերի՝ ամենափոքրերից մինչև պատանեկան: Հաղորդումների ընթացքում քննարկվել են

երեխաներին հետաքրքրող բազմազան խնդիրներ և հարցեր ոլորտի մասնագետների, հոգեբանների, մանկավարժների մասնակցությամբ: Պատանի հաղորդավարները ակտիվորեն մասնակցել են ձայնագրություններին և համագործակցել խմբագրության հետ, որն էլ ըստ էության դարձել է ապագա ռադիոլրագրողների դպրոց:
Յուրաքանչյուր կիրակի եթեր է հեռարձակվել մանկական ռադիոթատրոն:

«Լյա-լյա-ֆա»

Մանկապատանեկան ծրագրերում առանձնացել է **«Լյա-լյա-ֆա»** մանկապատանեկան երգի հիթ-շքերթը: Այն հնարավորություն է ընձեռել ներկայանալու մանուկ ու պատանի երգիչներին: Ստեղծագործական խումբը սերտորեն համագործակցել է «Արևիկ» անսամբլի, մանկական երաժշտախմբերի և երեխաների համար ստեղծագործող կոմպոզիտորների հետ՝ նրանց հնարավորություն տալով ներկայացնել նոր ստեղծագործություններ: Գործել է մշտական հետադարձ կապ www.lalafa.armradio.am կայքում և հեռախոսով:

Կրթական և Հայոց լեզու

«Մենք և մեր բառերը» և **«Խոսենք հայերեն»**

Լեզվի և խոսքի պահպանման գործում առանձնանում են «Մենք և մեր բառերը» և «Խոսենք հայերեն» հաղորդումները, որոնք մեր ունկնդիրներին ծանոթացնում են մեր մայրենի լեզվի բառաշարի ծագումնաբանությանը, քերականական կանոններին և օգնում հնարավորինս անաղարտ պահել մայրենին: Հանրային ռադիոընկերությունն իր գործունեությամբ, հայերենի նկատմամբ հոգատար և հարգալից վերաբերմունքով ձգտում է ապացուցել, որ կարելի է գրագետ և կիրթ հայերենով եթերում լինել, հետաքրքիր ու արդիական:

Հանրային ռադիոընկերությունը Հայաստանի Հանրապետության նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրություններին թեկնածուներին տրամադել է 98 րոպե 58 վրկ. վճարովի և 640 րոպե 49 վրկ անվճար եթերաժամ:

Հանրային ռադիոընկերությունը Երևանի ավագանու 2013 թվականի մայիսի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքին տրամադել է 95 րոպե 1 վրկ. վճարովի և 279 րոպե 47 վրկ. անվճար եթերաժամ:

Երիտասարդական հաղորդումներ

«Լյուն-սե»

Երիտասարդական ծրագրերից 2013 թվականին Հանրային ռադիոընկերության եթերում հեռարձակվել է «Լյուն-սե» երիտասարդական ամենօրյա հաղորդաշարը, որը լուսաբանում է կրթական, բնապահպանական, հասարակական, սոցիալական, մշակութային ու մարզական ոլորտների խնդիրները, պարբերաբար անդրադարձ է եղել

մարզերում ապրող երիտասարդությանը հուզող խնդիրներին, ներկայացրել արտասահմանում ապրող հայ երիտասարդներին: 2013 թվականին «Լյուն-սե»-ն Եվրոպական հեռարձակողների միության (EBU) հետ համատեղ ստեղծեց www.lyunse.com կայքը, որն երիտասարդական միջազգային հարթակ է՝ ցանկացած կարծիք, տեսակետ, իրադարձություն, երևույթ քննարկելու և սեփական կարծիքը լսելի դարձնելու համար: Հաղորդաշարի ստեղծագործական խումբը համագործակցում է Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների և ակումբների հետ:

«Մարզական խաչմերուկ»

«Մարզական խաչմերուկ» հաղորդումն անդրադարձել է հայկական մարզաշխարհի հաղթանակներին, նվաճումներին, խոսվել է բացթողումների մասին՝ փորձելով նպաստել հայկական սպորտի զարգացմանը:

«Ապրելու բանաձև»

«Ապրելու բանաձև» վերնագրված հայրենասիրական, պատմական և դաստիարակչական ռադիոպանթեոնը ներկայացնում է Արցախի ազատամարտում հերոսացած հայ քաջորդիներին:

<u>Ժամանցային հաղորդումներ</u>

«Խելք-խելքի»-ն ինտելեկտուալ, ուսուցողական, ժամանցային հաղորդում է միտված երիտասարդության շրջանակներում գիտելիքի, իմացության և տրամաբանության զարգացմանը:

«Գիշերն անույշ է». սա ժամանցային հաղորդում է նրանց համար, ովքեր գերադասում են օրվա գիշերային հատվածը, այն պարունակում է պատմամշակութային և հոգևոր ակնարկներ, հումոր և զվարճալի պատմություններ, հետաքրքիր հարցազրույցներ և այդ ամենը՝ համեմված տարբեր ոճի երաժշտությամբ:

<u>Հոգևոր հաղորդումները</u>

«Ավետիս», «Շողակն Արարատյան», «Մանանա» հոգևոր հաղորդումները պատրաստվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան թեմի դիվանի հետ համագործակցությամբ: Հաղորդումների առաջնայնությունն է եղել ծանոթացնել հայ եկեղեցու պատմությանը, եկեղեցական ծեսերին և տոնակատարություններին: Ռադիոունկնդիրները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու հոգևոր կյանքին ու խոսքին: Հոգևոր հաղորդումներին մասնակցել են հոգևորականներ, հոգեբաններ, ազգագրագետներ:

<u>Երաժշտական հաղորդումներ</u>

Երաժշտական հաղորդումների խմբագրությունը, ամբողջականության սկզբունքը պահպանելով, ռադիոունկնդրին մատուցել է հայկական, ժողովրդական, գուսանական, ժամանակակից և դասական, բազմաժանր ու բազմաոճ երաժշտական ստեղծագործություններ՝ ներկայացնելով հայ մեծանուն կոմպոզիտորներին:

«Արմատներ»

«Արմատներ» հաղորդաշարն անդրադառնում է մեր նախնիների թողած ժառանգությանը, ավանդական ժողովրդական ստեղծագործության տարբեր շերտերին ու դրսևորումներին ըստ տարածաշրջանների ու ժանրերի, և ներկայացնում մեր օրերում ստեղծագործող աշուղներին:

«Կամերտոն»

«Կամերտոն» հաղորդման միջոցով կազմակերպվել են ժամանակակից երաժշտական մշակույթի հիմնահարցերի պրոֆեսիոնալ քննարկումներ ուղիղ եթերում՝ մտավորականների, կոմպոզիտորների, երիտասարդ երգիչների և բնագավառի հիմնահարցերով մտահոգ մասնագետների մասնակցությամբ:

«Էտյուդներ»

«Էտյուդներ» հաղորդաշարն անվանի երաժիշտների գործունեության, նրանց կյանքի անհայտ էջերի, խառնվածքների, ճակատագրի, մարդկանց հետ հարաբերությունների մասին է:

Հանրային ռադիոընկերության ֆոնդում պահպանված բացառիկ ձայնագրություններն օգտագործելով է պատրաստվում կյանքից հեռացած ստեղծագործողների մասին **«Գանձարան»** հաղորդաշարը: **«Հանրային տասնյակը»** ամեն շաբաթ ամփոփել է ռադիոունկնդրի պատվերները: Մեծ լսարան են արձանագրել **«Մեկ երգի պատմություն», «Երաժշտությունն ու մենք», «Մեկ գործիքի պատմություն», «Մի երգի ուսուցում»** հաղորդումները: Երաժշտական հաղորդումներում իրենց մասնակցությունն են ունեցել Հանրային ռադիոընկերության երաժշտական կոլեկտիվները. **Արամ Մերանգուլյանի անվան** ժողովրդական գործիքների, **«Սայաթ Նովա»** աշուղական երգի, **«Արևիկ»** մանկապատանեկան անսամբլները և **էստրադային սիմֆոնիկ** նվագախումբը: Վերջիններս տարվա ընթացքում համալրել են ռադիոյի ֆոնդը նոր ձայնագրություններով:

<u>«ԻՄ ՌԱԴԻՈ»-ն</u>

Հանրային ռադիոընկերության «Երկրորդ ծրագիր»-ը («Իմ ռադիո»-ն) բազմաժանր ու բազմաոճ երաժշտական, ժամանցային, հետաքրքիր ծրագիր է երիտասարդների համար, որտեղ ներկայացվել են անցյալի և մերօրյա հայ ու օտարազգի կատարողների լավագույն ստեղծագործությունները:

Ռադիոհաղորդումների հեռարձակում:

2013 թվականի ընթացքում Հանրային ռադիոյի հաղորդումները հեռարձակվել են սահմանված որակական և տեխնիկական չափանիշներին համապատասխան: «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվել է գերկարճ, ՀՀ ողջ տարածքում FM տիրույթի հաճականություններով (Երևանում՝ 107.7 Մhg): Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվում է նաև ինտերնետային www.armradio.am կայքէջում: «Իմ ռադիո»-ն հեռարձակվել է 103.8 ՄՀց հաճախությամբ Երևանում: Արտասահմանի համար տրվող հաղորդումները հեռարձակվել են միջին և կարճ հաճախականություններով:

Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Ռադիո» ՓԲ, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունների կողմից ինչպես նաև «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ–ի սեփական տեխնիկական միջոցներով:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հանրային ռադիոընկերությունը 2013 թվականին իր գործունեությունն ապահովել է պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից, եթերաժամանակի տրամադրումից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.03 «Ռադիո ծառայություններ» ծրագրով ՀՀ պետական բյուջեից Հանրային ռադիոընկերությանը նախատեսվել էր հատկացնել 637,210.50 դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով: Տարվա ընթացքում ՀՀ կառավարության 20.12.2012թ. N 1616-Ն որոշման հիման վրա Հանրային ռադիոընկերությանը լրացուցիչ հատկացվել է 2,787.50 հազ.դրամ, 27.06.2013թ. N 661-Ն որոշման համաձայն՝ 7,229.40 հազ.դրամ և 18.07.2013թ. N 781-Ն որոշման համաձայն՝ 1,708.50 հազ.դրամ: Ընդամենը՝ լրացուցիչ հատկացվել է 11,725.40 հազ.դրամ

Ընդհանուր առմամբ, 2013 թվականին ՀՀ պետական բյուջեից Հանրային ռադիոընկերությանը հատկացվել է 648,935.90 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ:

Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2013 թվականին պլանավորել էր ստանալ 32,223.20 հազ. դրամ եկամուտ, իսկ ստացված փաստացի եկամուտները կազմել են 34,700.60 հազ. դրամ (առանց հողի և ակտիվներին վերաբերող շնորհների):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հանրային ռադիոընկերության կողմից 2013 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 7.

2013 թվականին Հանրային ռադիոընկերության եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների

(հազ.դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակները	Գումար
1	**Ընթացիկ դրամաշնորհ**	**648,935.9**
2	**Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ**	**74,241.0**
3	**Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում՝**	**44,037.0**
3.1	Առևտրային գովազդ	12,166.7
3.2	Վճարովի եթերաժամանակ	581.9
3.3	Վարձավճարներ	19,059.3
3.4	Այլ եկամուտներ	12,229.1
Ընդամենը		**767,213.9**

Աղյուսակի «Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ» տողում ներառված են ՀՀ պետական բյուջեից ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցներով ձեռքբերված, ինչպես նաև անհատույց ստացված ակտիվների գծով եկամուտները:

2013 թվականին Հանրային հեռուստաընկերությունը ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմա: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոաընկերության 2013 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 8

2013 թվականին Հանրային ռադիոընկերության ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղությունները	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	461,492.1
2	Արտադրական ծախսեր	174,139.4
3	Հեռարձակման ծախսեր	115,275.9
4	Այլ ծախսեր	9,337.1
5	Շահութահարկի գծով ծախս	3,630.6
Ընդամենը		**763,875.1**

Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 60.4%-ը և ներառել է հաստիքային աշխատողների և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձի վարձատրության ծախսերը:

Արտադրական ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 22.8 %-ը և հիմնականում ներառել են ռադիոհաղորդումների արտադրության և ձեռքբերման, ռադիոհաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը, գործուղման, տրանսպորտային և կոմունալ ծախսերը, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, գրասենյակային ապրանքների, արտադրական նյութերի, պահեստամասերի և կապի ծառայությունների ձեռքբերման ծախսերը, ինչպես նաև շենքերի, շինությունների պահպանման, տնտեսական և ընթացիկ նորոգման ծախսերը:

Հեռարձակման ծախսերն կազմել են ընդհանուր ծախսերի 15.1 %-ը և ներառել են ՀՀ տարածքում և արտասահմանում հեռարձակման, ինչպես նաև ինտերնետային հեռարձակման ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 1.2 %-ը և ներառել են ներկայացուցչական և աուդիտի ծախսերը, հարկերը (բացառությամբ շահութահարկի), տուրքերը և այլ ծախսերը:

2013 թվականի գործունեության ընթացքում հարկերի և տուրքերի ձևով պետական բյուջե է վճարել 118,336.8 հազ. դրամ գումար:

6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2013 թվականին «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական հեռարձակել է 18 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության ստեղծումը պայմանավորված էր հոգևոր-մշակութային հեռուստաալիքի գործունեությունն առանձին իրավաբանական անձի կարգավիճակով իրականացնելու նպատակահարմրությամբ: Հոգևոր-մշակութային հեռուստաընկերության գործունեությունը ամբողջությամբ ուղղված է ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ու արդի մշակութային կյանքի համակողմանի ներկայացմանն ու լուսաբանմանը, հոգևոր բարոյական արժեքների քարոզչությանը:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեից Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությանը՝ ընթացիկ գործունեությունն ապահովելու նպատակով, հատկացվել է 147,900.30 հազ.դրամ գումար ընթացիկ դրամաշնորհ:

Հեռուստահաղորդումների պատրաստում

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, ինչպես նաև իր կանոնադրությամբ: 2013 թվականի ընթացքում Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը պատրաստել և հեռարձակվել է ընդհանուր առմամբ 6,554.0 ժամ ծավալով հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված Աղյուսակ 9-ում նշված թեմատիկ ուղղությունների:

Աղյուսակ 9

2013 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալներն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)
1	Մշակութային լրատվություն	262.0
2	Մշակութային հաղորդումներ	1,900.0
3	Հոգևոր հաղորդումներ	983.0
4	Գիտահանրամատչելի և ուսումնական վավերագրական կինոնկարներ	855.0
5	Երաժշտական ծրագրեր և համերգներ	1,048.0
6	Մանկական հաղորդումներ	786.0
7	Ուսումնական և այլ հաղորդումներ	720.0
Ընդամենը		**6,554.0**

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալներն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են նաև Գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները (%)



Մշակութային լրատվություն

Մշակութային լրատվության հաղորդումներից պատրաստվել և հեռարձակվել են **«Մշակութային ազդագիր»** և **«Ձայնագիր»** հաղորդումները, որոնք իրենց հիմնական թողարկումներում և հավելվածներում ներկայացրել են բազմաժանր ծրագրեր հեռուստադիտողների տարբեր տարիքային խմբերի համար:

«Ձայնագիր» հառուստահաղորդաշարը լուսաբանել է Հայաստանի երաժշտական կյանքը, ներկայացրել երևանյան համերգասրահներում կազմակերպված ժողովրդական, աշուղական, ակադեմիական և ժամանակակից երաժշտության նշանակալից միջոցառումները: 2013 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են Հայաստանում կայացած մի շարք երաժշտական փառատոններ՝ «Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոն, «Երևանյան» միջազգային փառատոնը, «Արամ Խաչատրյան» միջազգային փառատոնը, «Վերադարձ» դասական երաժշտության փառատոնը, «Վերածնունդ» փառատոնը, «Նոր անուններ» փառատոնը, «Ձվարթնոց» մրցույթ-փառատոնը, «Նարեկացի» արվեստի փառատոնը, «Կոմիտաս վարդապետ» համահայկական փառատոնը, ջազ և ռոք փառատոնները: Ներկայացվել են նաև միջազգային հռչակ վայելող նվագախմբերի, դիրիժորների և կատարողների մասնակցությամբ, հայկական և եվրոպական հոգևոր երաժշտության, ազգային

երաժշտության, ավանդական երգ ու պարի համույթների, աշուղական երաժշտական համույթների համերգներ:

«Մշակութային ազդագիր» ծրագիրն իր լսարանին ներկայացրել է հանրապետության պատկերասրահներում, ցուցասրահներում ու թանգարաններում անցկացվող միջոցառումները, լուսաբանել մշակույթի ոլորտում վաստակ ունեցող գործիչների գործունեությունը:

2013 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են հայաստանյան թատրոնների պրեմիերաներն ու խաղացանկերը: «Մշակութային ազդագիր»-ը հիմնական ու հատուկ թողարկումներով թատերասեր հանդիսատեսին հնարավորություն է տվել հետևել Հայաստանում կազմակերպված բոլոր կինո և թատերական փառատոններին՝ «Ոսկե ծիրան» երևանյան միջազգային փառատոն, «Վ.Փափազյանի անվան Շեքսպիրյան» միջազգային փառատոն, «Բրիտանական ֆիլմերի» փառատոն, «Ճապոնական ֆիլմերի» փառատոն, «Արգենտինական ֆիլմերի» փառատոն, «Կին» միջազգային կինոփառատոն, «Թատրոն իքս» փառատոն, «Ի սկզբանե էր բանն...» պոեզիայի միջազգային փառատոն, «Արտֆեստ» հանրապետական երիտասարդական բաց փառատոն, «Դուետ» միջազգային թատերական փառատոն Գյումիրում, «Ռեանիմանիա» միջազգային անիմացիոն փառատոն, «Հեքիաթասացության» փառատոն, «Հայփեստ» թատերական փառատոն, «Գրական տապան» միջազգային փառատոն, «Կինոաշուն» փառատոն:

«Մշակութային ազդագիրը»-ը հիմնական ու հատուկ թողարկումներում ներկայացրել է նաև փորձարարական արվեստն ու երիտասարդ ստեղծագործողներին և անդրադարձել գրքի ու գրահրատարակության ոլորտի խնդիրներին ու կազմակերպված միջոցառումներին:

Հեռուստաընկերությունը հեռարձակել է դասական և ժամանակակից հայ և այլազգի կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայտնի ու նորահայտ ստեղծագործողների համերգներ:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը համագործակցում է «Շողակաթ» հեռուստաընկերության հետ, որի պատրաստած հոգևոր-մշակութային և հոգևոր-եկեղեցական հաղորդումները համահունչ են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն ծրագրային քաղաքականության հետ: 2013 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը «Շողակաթ» հեռուստաընկերության հետ համագործակցության արդյունքում իր եթերով հեռարձակել է մի շարք հաղորդումներ, մասնավորապես՝

<u>Մշակութային հաղորդումներ</u>

- «Թեմա» - տաղավարային հաղորդաշար մշակութային թեմաներով,

- «Գիրք ճանապարհի» - հայ գրականության պատմության մեջ շրջադարձային արժեք ունեցող գրական գործերի մասին
- «Հանրագիտարան» - տեսահանրագիտարան հայ և համաշխարհային գիտության ու արվեստի մեծերի մասին
- «Կադրից դուրս» - հաղորդաշար հայ և համաշխարհային կինոգործիչների մասին
- «Թանգարաններ» - հաղորդաշար Հայաստանում գործող թանգարանների մասին
- «Հայտնի և անհայտ կինո» - հանրահայտ ռեժիսորների կյանքն ու գործունեությունը ներկայացնող հաղորդաշար
- «Նկարիչ» - հաղորդաշար հայ ժամանակակից նկարիչների մասին
- «Փորձասենյակ» - Հայաստանում գործող երաժշտական խմբերի մասին
- «Ներուժ» - Հայորդաց Տների գործունեությունը ներկայացնող հաղորդաշար
- «Լյումիեր ակումբ» - մեկ ֆիլմի պատմությունը ներկայացնող հաղորդաշար
- «Երկու ընկեր» - ժամանակակից հայ մտավորականին ներկայացնում են իրենց ընկերները
- «Սիրելով...» - մշակութային հաղորդաշար (սիրելով գիրքը, պարը, երաժշտությունը և այլն)
- «Հանիրավի մոռացվածները» - վավերագրական տեսաֆիլմ հայ մշակույթի մոռացված գործիչների մասին

<u>Հոգևոր հաղորդումներ</u>

- «Եկեղեցական կյանք» - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական կյանքի լուսաբանում
- «Հիսուսի հրաշքներն ու բժշկումները» - անիմացիոն հաղորդաշար, ուր հայ և եվրոպական մանրանկարչության օգտագործմամբ ներկայացվում են Նոր Կտակարանում նկարագրված Տերունական հրաշքները
- «Հարցեր քահանային» - քահանան պատասխանում է հեռուստադիտողների հարցերին
- «Հայրս քահանա է» - քահանայի մասին պատմում են ընտանիքի անդամները
- «Աստված իմ մեջ» - գիտնականները, արվեստագետները և մշակույթի այլ գործիչները խոսում են հավատքի և հոգևորի մասին
- «Դեպի եկեղեցի» - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատացյալները վկայում են իրենց հավատքը
- «Հայ Առաքելական Եկեղեցու խորհուրդները» - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Ծեսերի խորհուրդն ու մեկնությունը

- «Խորհուրդ խորին» - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Պատարագի մեկնություն
- «Հավատի կյանք» - ուխտի օր ունեցող եկեղեցիների համայնքային կյանքը
- «Քահանայի հուշապատում» - ավագ սերնդի քահանաների հուշերը

<u>Մանկական հաղորդումներ</u>

- «Հին ու նոր հեքիաթներ» - անիմացիոն մանկական հաղորդաշար՝ իրիկնային հեքիաթ
- «Ճամփաներ» - մանկապատանեկան դաստիարակչական հաղորդաշար
- «Մանուկ դպիրներ» - Հայ Առաքելական Ս. Եկեղեցում ծառայող մանուկների մասին
- «Պատումիկներ Աստվածաշնչից» - անիմացիոն հաղորդաշար, որ մանուկների համար ներկայացնում է Աստվածաշնչյան առանձին պատմություններ
- «Ինչն ինչոց է ըստ Պիստակի» - անիմացիոն մանկական հանրագիտարան
- «ՕԳԳ» - մանկապատանեկան հաղորդաշար մշակույթի տարբեր խմբակների գործունեության մասին

<u>Ուսումնական և այլ հաղորդումներ</u>

- «Ազգապատում» - Հայ ժողովրդի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը ներկայացնող հաղորդաշար
- «Պատկեր և խորհուրդ» - հաղորդաշարը ներկայացնում է հայ և եվրոպական մանրանկարչությունը
- «Արտեֆակտ» - հասարակական և կրթական հաստատությունների պատմությունը ներկայացնող հաղորդաշար
- «Առաքինություններ» - բարոյական արժեքների դերը մարդու կյանքում
- «Ավետարանի գործող անձինք» - անիմացին ճանաչողական հաղորդաշար, ուր ներկայացվում են Նոր Կտակարանի կերպարները
- «Նվիրյալ անձեր» - հայ ժամանակակից գիտության և մշակույթի երևելիների կյանքն ու գործունեությունը
- «Հայը» - հայ մշակույթի երևելիները հայերի մասին
- «Երրորդ հազարամյակ» - հասարակական գործիչներն ու գիտնականները քննարկում են մշակութաբանական թեմաներ
- «Դեպի տուն» - Հայրենիք վերադարձած հայերը պատմում են իրենց գերդաստանի պատմությունը և հայրենիք վերադառնալու պատճառների մասին
- «Օր վեցերորդ» - հոգևորականը մշակույթի և հասարակական գործիչների հետ զրուցում է օրվա հրատապ թեմաներով

Երաժշտական ծրագրեր և համերգներ

Երևանի տարբեր համերգասրահներում տեսագրել և հեռարձակել է մի շարք համերգային ծրագրեր՝ կազմակերպված Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի և «Գեղարդ» երգեցիկ խմբի մասնակցությամբ:

Հեռուստահաղորդումների հեռարձակում

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը 2013 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի հաշվին: Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը այլ աղբյուրներից, մասնավորապես՝ առևտրային գովազդից և հովանավորությունից, մուտքեր չի ունեցել, քանի որ համաձայն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3.1 կետի պահանջի՝ արգելվում է գովազդի հեռարձակումը Հանրային հեռուստառադիոընկերության հոգևոր-մշակութային ուղղվածության հեռուստաալիքի կողմից:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.10 « Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ՀՀ պետական բյուջեից Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությանը նախատեսվել էր հատկացնել 147,849.1 դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով: Տարվա ընթացքում ՀՀ կառավարության 27.06.2013թ. N 661-Ն որոշման հիման վրա Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությանը լրացուցիչ հատկացվել է 51.2 հազ.դրամ:

Այսպիսով, 2013 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է 147,900.3 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ:

2013 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը պետական բյուջեից ստացված դրամաշնորհն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության 2013 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 10

2013 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղությունները	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	73,620.0
2	Արտադրական ծախսեր	23,432.0
3	Հեռարձակման ծախսեր	49,648.0
4	Այլ ծախսեր	1,204.0
	Ընդամենը	**147,904.0**

Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 49.8%-ը և ներառել է հաստիքային աշխատողների և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձի վարձատրության ծախսերը:

Արտադրական ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 15.8%-ը և ներառել են հեռուստառադիոհաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 33.6%-ը, իսկ այլ ծախսերը՝ 0.8%:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը 2012 թվականի գործունեության արդյունքներով 2013 թվականի ՀՀ պետական բյուջե է վճարել 6.0 հազ. դրամ շահութաբաժին:

7. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

Շիրակի մարզում Հանրային հեռուստառադիոընկերությունը հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը իրականացնում է «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲ ընկերության միջոցով:

2013 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն շարունակել է Շիրակի մարզում հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական միջինում 8.5 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ և 24 ժամ ռադիոհաղորդումներ:

2013 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից Շիրակի հանրային հեռուստառադիոյին՝ ընթացիկ գործունեությունն ապահովելու նպատակով, հատկացվել է 25,642.0 հազ. դրամ գումար ընթացիկ դրամաշնորհ:

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստում

Շիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, ինչպես նաև իր կանոնադրությամբ: 2013 թվականի ընթացքում հեռարձակվել են ընդհանուր առմամբ 3,152.9 ժամ հեռուստահաղորդումներ և 8,760.0 ժամ ռադիոհաղորդումներ՝ համաձայն ստորև բերված Աղյուսակ 11-ում նշված թեմատիկ ուղղությունների:

Աղյուսակ11.

2013 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հեռուստառադիոհաղորդումների փաստացի ծավալներն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հեռարձակված հեռուստահաղորդումների ծավալները (ժամ)	Հեռարձակված ռադիոհաղորդումների ծավալները (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	190.3	401.5
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	73.5	0.0
3	Մշակութային	79.1	91.3
4	Մարզական	222.5	376.6
5	Երաժշտական, ժամանցային	1,652.7	7,484.1
6	Այլ հաղորդումներ	934.8	406.5
Ընդամենը		**3,152.9**	**8,760.0**

Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացված են նաև Գծապատկեր 5-ում և Գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 5. 2013 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված հեռուստահաղորդումների փաստացի ծավալները (%)



Գծապատկեր 6. 2013 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռարձակված ռադիոհաղորդումների փաստացի ծավալները (%)



Հեռուստահաղորդումներ

Լրատվական, լրատվական-վերլուծական

Լրատվական, լրատվական-վերլուծական հեռուստահաղորդումներից հեռարձակվել են տարբեր լրատվական ակնարկներ մարզում առկա խնդիրների և իրադարձությունների վերաբերյալ:

Քաղաքական, տնտեսական և հասարակական

Քաղաքական, տնտեսական և հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդումներից հեռուստադիտողին են ներկայացվել **«Փակագիծ»** և **«Ստորակետ»** հաղորդաշարերը, որոնց շրջանակներում հրավիրված քաղաքական գործիչների, այս կամ այն ոլորտի պատասխանատուների հետ անդրադարձ է կատարվել մարզին առնչվող տարբեր խնդիրներին, ձեռքբերումներին, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, իրավական, առողջապահական և այլ ոլորտներում առկա հիմնախնդիրներին:

Մշակութային

Մշակութային հեռուստահաղորդումներից հեռարձակվել են **«Ես և դու»** և **«Դեպի տաճար»** հաղորդումները: «Ես և դու» հաղորդաշարը ներկայացնում է ժամանակակից մշակութային գործիչների, արվեստագետների ստեղծագործությունները, ինչպես նաև տարբեր մշակութային իրադարձություններ, որոնք առնչվել են Գյումրի քաղաքին և Շիրակի մարզին:

«Դեպի տաճար» հոգևոր-մշակութային հաղորդումը ներկայացնում է մեր դավանանքը, առաքելական եկեղեցու ծեսերը, տոները, խորհուրդները, սրբերի վարքերը, աստվածաշնչյան մեկնությունները: Հաղորդաշարի ընթացքում տրվում են պատմական տեղեկություններ եկեղեցիների կառուցման, նրանց շուրջ տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև լինում են հարցազրույցներ հոգևորականների և եկեղեցուն մոտ կանգնած մարդկանց հետ:

Մարզական

Մարզական հաղորդումներից հեռուստադիտողին է ներկայացվել **«Շիրակ աշխարհի սպորտ»**-ը, որն անդրադառնում է մարզում և հանրապետության տարածքում տեղի ունեցած կարևորագույն մարզական իրադարձություններին: Պատրաստվել և հեռարձակվել է **«Ֆուտբոլային կրքեր»** հաղորդաշարը, որը ներկայացնում է աշխարհում կարևորագույն և հիշարժան ֆուտբոլային իրադարձությունները: Հեռարձակվել են

«Շիրակ» ֆուտբոլային թիմի բոլոր խաղերը և Իսպանիայի Պրեմիեր լիգայի առաջնության խաղերը:

Երաժշտական և ժամանցային

Երաժշտական և ժամանցային հաղորդումներից Շիրակի հանրային հեռուստառադիոյի եթերում տեղ են գտել ազգագրական երգ ու պար, գեղարվեստական ֆիլմեր, հեռուստատեսային սերիալներ, փաստագրական ֆիլմեր, մուլտֆիլմեր, տեսահոլովակներ, հայ և արտասահմանյան երգիչ-երգչուհիների երաժշտական համերգային ծրագրեր:

Այլ հաղորդումներ

Այլ հաղորդումները առնչվում են մանկապատանեկան, գիտական, կրթական, ինչպես նաև հայոց լեզվին և պատմությանը վերաբերող թեմաներին: Մասնավորապես հեռարձակվել են Գյումրու Պետական Մանկավարժական Ինստիտուտի հետ համատեղ պատրաստվող երիտասարդության հարցերին առնչվող հաղորդումներ, ազատամարտիկների մասին պատմող հաղորդումներ, անվանի մարդկանց մասին պատմող ակնարկները, հայ ժողովրդի պատմությանը և ազատամարտին վերաբերվող հայրենական արտադրության հաղորդումներ, որոնք տրամադրվել են այլ հեռուստաընկերությունների կողմից: Իրականացվել է Հայաստանի Հանրապետության նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների Հանրային հեռուստաընկերության կողմից լուսաբանված քարոզարշավի վերահեռարձակումը:

Ռադիոհաղորդումներ

Լրատվական, լրատվական-վերլուծական

Լրատվական, լրատվական-վերլուծական ռադիոհաղորդումներից են **«Օրագիծ»** լրատվական և **«Հետագիծ»** լրատվական-վերլուծական հաղորդումները:

Մշակութային

Մշակութային հաղորդումներից 2013 թվականին պատրաստվել և հեռարձակվել է **«Դեպի տաճար»** ռադիոհաղորդաշարը, որն անդրադառնում է Հայ Առաքելական Եկեղեցուն, տրվում են աստվածաշնչյան մեկնություններ, ինչպես նաև անդրադարձ է կատարվում եկեղեցական տոնացույցին:

Մարզական

Մարզական հաղորդումներն եթեր է հեռարձակվում օրական 2 անգամ՝ ներկայացնելով սպորտային լուրեր և իրադարձություններ մարզական կյանքից:

Երաժշտական-ժամանցային

Երաժշտական-ժամանցային հաղորդումներից ռադիոունկնդիրներին է ներկայացվել **«Առավոտը միասին», «Քեզ համար»** և **«Երաժշտական խճանկար»** ռադիոծրագրերը, ինչպես նաև ռադիոյի եթերում հնչել է հայկական, ռուսական և արտասահմանյան երաժշտություն:

Այլ հաղորդումներ

Այլ հաղորդումների թվում են եղել ռադիոթատրոնը, ասմունքը, տոներին նվիրված հաղորդումները, ինչպես նաև իրականացվել է Հայաստանի Հանրապետության նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների Հանրային ռադիոընկերության կողմից լուսաբանված քարոզարշավի վերահեռարձակումը:

Հեռուստահողորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակում

Շիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստահաղորդումների հեռարձակումն իրականացնում է Գյումրի քաղաքում և հարակից տարածքներում՝ դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով, և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով, իսկ ռադիոհաղորդումների հեռարձակումը իրականացնում է Գյումրի քաղաքում FM տիրույթում՝ 102.5 ՄՀց հաճախականությամբ: Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Շիրակի հանրային հեռուստառադիոն 2013 թվականին իր գործունեությունն ապահովել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից, հովանավորությունից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08.03.01.04 «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ՀՀ պետական բյուջեից Շիրակի հանրային հեռուստառադիոյին նախատեսվել էր հատկացնել 24,761.70 հազ.դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով: Տարվա ընթացքում ՀՀ կառավարության

27.06.2013թ. N 661-Ն որոշման հիման վրա Շիրակի հանրային հեռուստառադիոյին լրացուցիչ հատկացվել է 788.30 հազ.դրամ և 18.07.2013թ. N 781-Ն որոշման համաձայն՝ 92.00 հազ.դրամ:

Այսպիսով, 2013 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից Շիրակի հանրային հեռուստառադիոյին հատկացվել է 25,642.0 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ:

Շիրակի հանրային հեռուստառադիոն 2013 թվականին պլանավորել էր եկամուտների այլ աղբյուրներից ստանալ 10,400.00 հազ. դրամ գումար: Ստացված փաստացի եկամուտները կազմել են 3,649.0 հազ. դրամ: Տարբերությունը հիմնականում պայմանավորված է հովանավորության և այլ եկամուտների կրճատումով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից 2013 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 12

2013 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների

(հազ.դրամ)

Հ/Հ	Եկամտի տեսակները	Գումար
1	**Ընթացիկ դրամաշնորհ**	**25,642.0**
2	**Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում՝**	**3,649.0**
2.1	Առևտրային գովազդ	2,650.9
2.2	Վճարովի եթերաժամանակ	978.1
2.3	Այլ եկամուտներ	20.0
Ընդամենը		**29,291.0**

2013 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Շիրակի հանրային հեռուստառադիոյի 2013 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 13

2013 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

(հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսային ուղղությունները	Գումար
1	Աշխատավարձեր, հավելավճարներ և այլ վարձատրություններ	21,344.4
2	Արտադրական ծախսեր	4,096.8
3	Հեռարձակման ծախսեր	3,206.5
4	Այլ ծախսեր	1,418.6
5	Շահութահարկի գծով ծախս	158.7
Ընդամենը		**30,225.0**

Աշխատավարձ, հավելավճարներ և այլ վարձատրություններ ծախսային հոդվածը կազմել է ընդհանուր ծախսերի 71.6%-ը և հիմնականում ներառել է հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև հեռուստառադիոհաղորդումների ստեղծագործական խմբերի ծախսերը:

Արտադրական ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 13.6% և ներառել են հեռուստառադիոհաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, հիմնական միջոցների մաշվածքը, գործուղման, տրանսպորտային և կոմունալ ծախսերը, գրասենյակային ապրանքների, արտադրական նյութերի, կապի ծառայությունների ձեռքբերման ծախսերը, տնտեսական և ընթացիկ նորոգման, ինչպես նաև գույքի և տեխնիկայի վարձակալության գծով ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 10.6% և ներառել են Շիրակի մարզում հեռուստահաղորդումների և Գյումրի քաղաքում ռադիոհաղորդումների հեռարձակման ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 4.7%-ը և ներառել են, աուդիտի ծախսերը, հարկերը (բացառությամբ շահութահարկի), տուրքերը և այլ ծախսերը:

2013 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարել 5,603.6 հազ. դրամ գումար: Տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը աշխատել է վնասով:

Շիրակի հանրային հեռուստառադիոն 2012 թվականի գործունեության արդյունքներով 2013 թվականին ՀՀ պետական բյուջե է վճարել 31.5 հազ. դրամ շահութաբաժին:

2013 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն ՀՀ կառավարության 20.05.2010թ. N694Ա որոշման համաձայն Գյումրու Քաղաքապետարանի կողմից տրամադրված միջոցների հաշվին իրականացրել է կապիտալ նորոգման աշխատանքներ՝ 7,000.0 հազ. դրամ ընդհանուր գումարով: Իրականացվել են վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքներ:

Շիրակի հանրային հեռուստառադիոն ունի տեխնիկական վերազինման անհրաժեշտություն, քանի որ ներկա տեխնիկական միջոցները հին են և ունեն բարձր մաշվածության տոկոս: Այդ իսկ պատճառով տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման գործընթացը շարունակական բնույթ է կրում և Շիրակի հանրային հեռուստառադիոն յուրաքանչյուր տարի նախատեսում է իրականացնել տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման աշխատանքներ՝ հաշվի առնելով այդ ուղղություններով նախատեսվող ֆինանսական միջոցներն ու առաջնահերթությունները:

8. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ

2013 թվականին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը շարունակել է ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը: Այդ նպատակով իրականացվել են չորս սոցիոլոգիական հետազոտություններ 300 փորձագետների մասնակցությամբ հետևյալ թեմաներով՝ «Կրթություն և ՁԼՄ-ներ», «Գիտություն և ՁԼՄ-ներ», «Տնտեսություն և ՁԼՄ-ներ», «ՁԼՄ-ներ հեռուստատեսություն, ռադիո»: Իրականացվել են նաև «Հանրային հեռուստաընկերության եթերային քաղաքականության ուսումնասիրություն. հեռուստալսարանի ընկալումներն ու ակնկալիքները», «Հանրային հեռուստաընկերության հաղորդաշարերի նկատմամբ լսարանի վերաբերմունքի չափման հետազոտություն» և «Հանրային հեռուստաընկերության հաղորդաշարերի նկատմամբ լսարանի վերաբերմունքի չափման հետազոտություն» սոցիոլոգիական հետազոտությունների նախապատրաստական աշխատանքները (հարցաթերթի մշակում, հետազոտության ընտրանքի կազմում, տվյալների բազայի կառուցում):

Վերոնշյալ հետազոտությունների և հարցումների արդյունքները նպաստել են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ծրագրերի կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը, ինչպես նաև ծրագրերի կազման գործընթացին հանրության մասնակցության ապահովմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՁԱՂԻՆՅԱՆ